

3642

Յարժանանքի քաղաք յեղծման, միացման

Բ. Գ. ՍՏԱԼԻՆԸ

Տ

Ե

Խ

Ն

Ի

Մ Ա Ս Ի Ն

Կ

Ա

Յ

Ի

3K33

5-29

ԿՐԻՍՏԻՆ

1933 ՅԵՐԵՎԱՆ

из.

20 NOV 2009

[illegible]

1. Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ն
ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 3
2. Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ն
ՅԵՎ ՏՆՏԵՍԱՎԱՐ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-
ՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 16
3. Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ն
ՅԵՎ ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑ-
ՄԱՆ ՏԵՄՊԵՐԸ 23
4. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԴՐԵՐ 30
5. Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ն
ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐ-
ՊՈՒՄԸ 43
6. Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ն
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ 50
7. Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ն
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ 51
8. Տ Ե Խ Ն Ի Կ Ա Ն
ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ 64

2656
38

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ներկա հավաքածուի նպատակն է սալ բնկ- Ստալինի յերկերից կարեւորագույն հաս- վածները բնդիմանալու և սեխնիկայի հարցերի յեվ նրա դերի մասին, հասկապես սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում:

Նման հավաքածուները միշտ ունեն այն պակասությունը, վոր առանձին հասված- ները բաժանում են կոնսեպսից, վորով անխուսափելիորեն վորոշ չափով աղավա- դում են այդ հասվածներում արտահայտված միտքը: Վերստմասիական այդ բերու- րյունն առանձնապես զգալի յե այն ժամանակ, յեր խոսք վերաբերում է բնկ- Ստալինի յերկերին, վորոք առանձնապես հարկ է դնել յերկերից ցա- ւե ծիւղի ալ եկ տիկա կառուցման յա մը յե վե սե յե վոր ա կառու- յա մը:

Վորպեսզի մի քիչ քննույզ բուլացվի ֆեաստմասիական վերահիշյալ դեմեկսը, հաս- վածները տրվում են քառ հնարավորին ալելի լայն կոնսեպսում: Յերբմն այդ կոն- սեպսը ծավալվում է միջնել, քվում է քե, սեխնիկային չվերաբերող հարցեր: Այսպես, որինակ, դա սեղի յե ունեցել մի յերկում սոցիալիզմի շինարարության մեջ սեխնիկայի դերի հարցում: Ընկ. Ստալինի միտքը յեր կարելի ենեկայացնել առանց աղավաղումների, յերբ հազվի չառնենք բացի սեխնիկայից ցայեվ մյուս պայմանները:

Հասվածները բերելով, խմբագրությունն հե կանգնեց նյութի մեջ սեխական բա- ցաստական միջարկումներ կատարելուց: Սակայն միտքնի դեկլարում առանց նրանց հնարավոր չեղով յուս գնալ: Այդպիսի միջարկումներն առնված են ֆառակուսի փակագծերում[]:

Տեխսը մեջ է բերված տառացի նշանակումը: Ընդ վորում բնկ. Ստալինի տեխսում վորպես կանոն բնդունված է ցոլատան ու բնդգծվածը սալ նույն ձեղով- հաս- վածներում ալմեուրեք գերադասված են հաս օրինակ բնդգծման ձեղը յայե- րենում պահպանվում է ցրիվ օարվածով բնդգծման ձեղը:

Հասվածները դասավորված են սիսեմասիկ կարգով, իսկ յուրաքանչյուր սիսեմա- սիկ ամբողջության մեջ ժամանակագրական հեկվոդականությունը: Կոնսեպսի ցկասմամբ ակնարկումները տրվում են կրնա: Ոգտագործված աղբյուրների յակա- տար ցուցակը բերված է հավաքածուի վերջում:

Սիսեմասիկ պարբերությունները, վորոք սակ դասավորված է նյութը, անխուս- փելիորեն վորոշ բնդանկումն ունեն: Դրա համար էլ նրանց վերագրելը յերբեք էլ չեն սպառում տեխսերի կոնկրետ բովանդակությունը: Միանգամայն պարզ է, վոր ներկա հավաքածուն կազմողները յեվ վոյ մի չափով նպատակ չեն դրել վախա- րհել բնկ. Ստալինի յերկերի յակասար տեխսի անմիջական ուսումնասիրությանը Ամենից օտ, վոր հավաքածուն կարող է հեկադեղել դա այն է, վորպեսզի կար- դանա տեխնիկայի յիտապես ման տեխնիկայի ունեց բնկ. Ստալինի յերկերի ա մը բուղ յոնսեպսի պարտադիր ուսումնասիրումն է ինժե- րային ճարտարագիտության մեջ: Պեկական գիտական գրադարանի ալմա- տակիցներ բնկ. բնկ. Ս. Ս. Գալպեկով, Ռ. Ա. Լիցկելի, Ն. Յե. Պրայսի, կողմից բնկ. Ս. Ի. Ռայնովի դեկավարությամբ:

Փարգմ. Մ. Զախարյան.

Հայ, քարգմ. խմբ. Մարուս.

Մարգարի Ա. Տ. Միտչյան

Հանձնված է արտադրության 26 հունիսի 1933 թ.

Մտարգրված է տպագրելու 3 հունիսի 1933 թ.

Հրատ. № 116, Տիպո 3000, Գլավիտ № 7645 (բ)

Կուստրաի տպարան, Պատվեր № 6, 170,000 տպ. ցո.

1.

ՏԵԽՆԻԿԱՆ

ՅԵՎ ԽՍՀՄ-ՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՉՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«...վոյ վոր չի սկսի պնդել, վոր տնտեսական վտանգը (չոգեմե- քենաների պակասը, գյուղատնտեսության, տեքստիլ ֆարրիկա- ների, մետաղաձուլական գործարանների մեքենաների պակասը, ելեկտրոկայանների սարքավորման պակասը և այլն) մասսանե- րի գիտակցության համար նույնքան իրական է, վորքան ռազ- մական վտանգը մոտիկ անցյալում: Բանվոր դասակարգի միլիոն- ները տնտեսական քայքայման դեմ շարժելու համար անհրաժեշտ է բարձրացնել լայն մասսաների նախաձեռնությունը, դիտակցու- թյունը, ինքնագործունեյությունը. անհրաժեշտ է կոնկրետ փա- տերով համոզել նրանց, վոր տնտեսական քայքայումը նույն- քան իրական է մահացու վտանգ է ներկայացնում իրենից, վոր- քան յերեկ ռազմական վտանգն էր. անհրաժեշտ է դեմոկրատի- կորեն կառուցված պրոֆմիությունների միջոցով բանվորական միլիոններին ներգրավել արտադրության վերականգնման գոր- ծում»:

„Ուղղակի յա յի մասին“, էջ 10, „Մեր տարածությունները“ հոդվածը, 1921 թ. հունվարի 19-ը:

«Վերջին յերեք որերս յես հնարավորություն ունեցա կարդալու «Ռուսաստանի ելեկտրոֆիկացման պլանը» ժողո- վածուն: Հիվանդությունս ողնեց (չկա չարիք առանց բարիքի): Հիանալի, լավ կազմված գիրք է: Առանց չափերտների, իսկական միասնական, իսկական պետական տնտեսական պլանի վարպետ ուրվագիծ է: Տնտեսապես հետաքննա- տանի խորհրդային վերնաշենքի համար ներկա պայմաններում իսկական իրական է միակ հնարավոր տեխնիկական-արտադրա-

կան բազայի անցկացման միակ մարքսիստական փորձը մեր ժամանակում: Հիշեցե՛ք մինչպատերազմյան արդյունաբերության բեկորներին՝ անվորակ գյուղացիական-բանվորական մասսայի («աշխատանքային բանակի») աշխատանքի մասսայական գործադրման հիման վրա Ռուսաստանի տնտեսական վերականգնման» Տրոցկու անցյալ տարվա «պլանը» (նրա թեզիսները): Ի՞նչպիսի վողոքմելիություն, ինչպիսի հետամնացություն՝ համեմատած Գոբելրոյի պլանին: Իրեն իբսենյան հերոս յերևակայած միջնադարյան տնայնագործ, վորը կոչված է «փրկելու» Ռուսաստանը հին հեքիաթով...: Իսկ ինչ արժեն այն ասանյակ «միասնական պլանները», վորոնք, համոթ մեզ, աջ ու ձախ յերևան են գալիս մեր մամուլում—աշակերտների յերեխայական թոթովանք... Կամ թե՛ դեռևս Գոբելրոն «քննադատող» և մինչև ականջները ռուտինայի մեջ խրված Ռիկովի քաղքենիական «ռեալիզմը» (իբականություն մեջ՝ մասին լ՞իվ չի նա):

Իմ կարծիքը.—

- 1) այլևս վոչ մի բոլոր չկորցնել պլանի մասին յեղած շատախոսությունների վրա.
- 2) սկսել անմիջապես տրակտիկ կերպով գործի անցնելը.
- 3) այդ գործին անցնելու շահերին հպատակեցնել նյութեղեն և մարդիկ բերելու, ձեռնարկությունները վերականգնելու, բանուժը բաշխելու, պարեն հայթայթելու, մատակարարման բազաներ և հենց մատակարարումը կազմակերպելու և այլն մեր աշխատանքի առնվազն ¹/₃-ը (²/₃-ը կգնա «ընթացիկ» կարիքներին):
- 4) վորովհետև Գոբելրոյի աշխատողների մեջ, չնայած նրանց բոլոր լավ կողմերին, պակասում է առողջ գործնականությունը (հողվածներում զգացվում է պրոֆեսորական իմպոտենտություն), ապա անպայման նրանց մոտ «պլանային հանձնաժողովի» մեջ մտցնել կենդանի պրակտիկայի մարդկանց, վորոնք գործում են «ի կատար ածել», «ժամկետին կատարել» և այլն սկզբունքով:
- 5) Պարտադրել «Պրավդա», «Իզվեստիա», հատկապես «Եկոնոմիչեսկայա ժիզն» թերթերին՝ զբաղվել «Ելեկտրոֆիկացման պլանի» ժողովրդականացմամբ ինչպես հիմնականում, նույնպես և մանրամասնություններում, վորոնք վերաբերում են ա-

ռանձին բնագավառներին, հիշելով, վոր գոյություն ունի միայն մեկ «միասնական տնտեսական պլան»—դա «Ելեկտրոֆիկացման պլանն» է, վոր մնացած բոլոր պլանները—միայն շատախոսություն են, դատարկ և փաստակար:

Մարտ, 1921 թ.

ՋԵՐ ՄՏԱԼԻՆ

Հ. Գ. Լ. Ս. ա. ի. Գ. ա. Կ. Լ. Ե. Գ. Գ. Գ., «Պրավդա», 1930 թ., № 351 4796, 22 դեկտեմբերի 1:

«Կարելի՞ յե արդյոք սեփական ուժերով ընդհանրապես սոցիալիզմ կառուցել մեր յերկրում, տեխնիկական-տնտեսական տեսակետից հետամնաց յերկրում ուրիշ յերկրներում ավելի կամ պակաս յերկարատե ժամանակով կապիտալիզմի պահպանման պայմաններում»:

„Ուսուցիչի մասին“, Եջ 183, „Ռ-իլի 14-րդ կոմբեռնցիայի աշխատանքների արդյունքների շուրջը“, 1925 թ. մայիսի 9-ի զեկուցումը:

«...բանից դուրս է գալիս, վոր կապիտալիստներով շրջապատված պրոլետարիատի դիկտատուրայի յերկրը կարող է վնչ միայն սեփական ուժերով սպառել պրոլետարիատի ու գյուղացիության միջև յեղած հակասությունները, այլև նա կարող է և պետք է գեռ կառուցի սոցիալիզմ, կազմակերպի իրեն մոտ սոցիալիստական տնտեսություն և ստեղծի ռազմական ուժը նրա համար, վորպեսզի ոգնություն հասնի շրջակա յերկրների պրոլետարներին՝ կապիտալի տապալման համար մղելիք նրանց պայքարում: Այսպես է լենինիզմի հիմնական դրույթը մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի մասին»:

„Ուսուցիչի մասին“, Եջ 186-187, „Ռ-իլի 14-րդ կոմբեռնցիայի աշխատանքների արդյունքների շուրջը“, 1925 թ. մայիսի 9-ի զեկուցումը:

«...Լենինը լիակատար կերպով գիտակցում է մեր յերկրում սոցիալիզմի կառուցման տեխնիկական դժվարությունները, բայց նա դրանից ամենևին այն անհեթեթ հետևությունը չի անում, թե «Ռուսաստանում սոցիալիստական տնտեսության իսկական վերելքը հնարավոր կդառնա Յեվրոպայի կարևորագույն յերկրներում պրոլետարիատի հաղթանակից հետո միայն», այլ գտնում է, վոր մենք կարող ենք մեր սեփական ուժերով հաղթահարել

այդ դժվարութիւնները նրա համար, վորպեսզի հասնենք «վերջ-
նական հաղթութեան», այսինքն՝ կատարյալ սոցիալիզմի կա-
ռուցմանը»:

„Ու պ ո գ ի ց ի ա յ ի մ ա ս ի ն“, Էջ 188, „Ռ-ՎրԷԿ 14-րդ կոնֆերենցիայի
առաջադրանքների արդյունքների շուրջը“, 1925 թ. մայիսի 9-ի գեկուցումը:

«...Լենինը լիակատար կերպով գիտակցում է մեր յերկրում սո-
ցիալիզմի կառուցման քաղաքական դժվարութիւնները, բայց
նա դրանից ամենևին չի անում այն սխալ հետեւութիւնը, թե
«առանց յեմքողական պրոլետարիատի ուղղակի պետական ա-
ջակցութեան՝ Ռուսաստանի բանվոր դասակարգը չի կարող իր
ձեռքում պահել իշխանութիւնը», այլ գտնում է, վոր գյուղա-
ցիւթիւնը նկատմամբ ճիշտ քաղաքականութիւն վարելու դեպ-
քում մենք միանգամայն կարող ենք հասնել «համաշխարհային
մասշտաբով հաղթութեան»՝ կատարյալ սոցիալիզմի կառուցման
իմաստով:

Իսկ ի՞նչ բան է ճիշտ քաղաքականութիւնը գյուղացիութեան
նկատմամբ: Գյուղացիութեան նկատմամբ ճիշտ քաղաքականու-
թիւնը մի բան է, վոր ամբողջութեամբ ու լիովին կախված է
մեզնից և միայն մեզնից, վորպէս մի կուսակցութիւնից, վորը
ղեկավարում է սոցիալիզմի շինարարութիւնը մեր յերկրում:

Միևնույն բանը, սակայն ել ավելի վորոշակի, Լենինն ասում է
1922 թվին կոոպերացիայի մասին իր գիտողութիւնների մեջ»...

„Ու պ ո գ ի ց ի ա յ ի մ ա ս ի ն“, Էջ 187-188, „Ռ-ՎրԷԿ 14-րդ կոնֆերենցիայի
առաջադրանքների արդյունքների շուրջը“, 1925 թ. մայիսի 9-ի գեկուցումը:

«...բանից յերևում է, վոր պրոլետարիատի ղեկատուութեան ուրով
մենք ունենք բոլոր տվյալները, վորոնք անհրաժեշտ են, վոր-
պեսզի կառուցենք կատարյալ սոցիալիստական հասարակութիւնը՝
հաղթահարելով բոլոր և ամեն տեսակի ներքին դժվարութիւն-
ները, վորովհետեւ մենք կարող ենք և պիտի հաղթահարենք
նրանց մեր սեփական ուժերով»:

„Ու պ ո գ ի ց ի ա յ ի մ ա ս ի ն“, Էջ 188, „Ռ-ՎրԷԿ 14-րդ կոնֆերենցիայի
առաջադրանքների արդյունքների շուրջը“, 1925 թ. մայիսի 9-ի գեկուցումը:

«Ով բացասում է մի յերկրում սոցիալիզմի կառուցման հնարա-
վորութիւնը, նա պիտի անպատճառ բացասի նաև Հոկտեմբե-
րյան հեղափոխութեան իրավականութիւնը: Յեւ ընդհակառակը՝

ով չի հավատում Հոկտեմբերին, նա չպիտի ընդունի սոցիալիզմի
հաղթանակի հնարավորութիւնը կապիտալիստական շրջապատի
պայմաններում: Հոկտեմբերին չհավատալու և մեր յերկրում սո-
ցիալիստական հնարավորութիւնները չընդունելու միջև յեղած
կապը կատարյալ է ու անմիջական»:

„Ու պ ո գ ի ց ի ա յ ի մ ա ս ի ն“, Էջ 189, „Ռ-ՎրԷԿ 14-րդ կոնֆերենցիայի
առաջադրանքների արդյունքների շուրջը“, 1925 թ. մայիսի 9-ի գեկուցումը:

«...քանի դեռ կա կապիտալիստական շրջապատը, պիտի՝ լինի
նաև կապիտալիստական յերկրների կողմից ինտերվենցիայի
վտանգը, իսկ քանի դեռ կա այդպիսի վտանգ, պիտի լինի նաև
ռեստավրացիայի վտանգը—հին կարգերի վերականգնման վտանգը:
Կարելի՞ յե արդյոք այս հակասութիւնները համարել միան-
գամայն հաղթահարելի մի յերկրի համար: Վո՞չ, չի կարելի:
Վորովհետեւ մի յերկրի ջանքերը, յեթե նույնիսկ այդ յերկրը
ղեկատուութեան յերկիր է, բավական չեն նրա համար, վորպեսզի
լիովին ապահովեն նրան ինտերվենցիայի վտանգից: Ինտեր-
վենցիայից կատարյալ ապահովութիւնը, նշանակում է նաև սո-
ցիալիզմի վերջնական հաղթանակը, այդ պատճառով, հնարավոր
է միայն միջազգային մասշտաբով, մի շարք յերկրների պրոլե-
տարների միացյալ ջանքերի հետեւանքով միայն, կամ—ավելի
լավ—մի քանի յերկրների պրոլետարների հաղթանակի հետեւանքով
միայն:

Ի՞նչ է սոցիալիզմի վերջնական հաղթանակը:

Սոցիալիզմի վերջնական հաղթանակը կատարյալ ապահովութիւն
է ինտերվենցիայի, ուրեմն նաև ռեստավրացիայի փորձերից, վո-
րովհետեւ ռեստավրացիայի քիչ թե շատ լուրջ փորձ կարող է տեղի
ունենալ միայն դրսի լուրջ աջակցութեան դեպքում, միայն մի-
ջազգային կապիտալի աջակցութեան դեպքում: Այդ պատճառով
բոլոր յերկրների բանվորների կողմից մեր հեղափոխութեան աջակ-
ցումը, իսկ առավել ևս այդ բանվորների հաղթանակը թեկուզ մի քա-
նի յերկրներում, հանդիսանում է առաջին հաղթանակող յերկրի
կատարյալ յերաշխիքի անհրաժեշտ պայմանն ինտերվենցիայի ու
ռեստավրացիայի փորձերից, սոցիալիզմի վերջնական հաղթանակի
անհրաժեշտ պայմանը»:

„Ու պ ո գ ի ց ի ա յ ի մ ա ս ի ն“, Էջ 189-190, „Ռ-ՎրԷԿ 14-րդ կոնֆե-
րենցիայի առաջադրանքների արդյունքների շուրջը“, 1925 թ. մայիսի 9-ի գեկու-
ցումը:

«Կոմունիստական հասարակութեան ընդհանուր բնութագիրը տրված է Մարքսի, Ենգելսի և Լենինի աշխատություններում: Յեթե հակիրճ ձևով տալու լինենք կոմունիստական հասարակության անատոմիան, ապա դա մի այնպիսի հասարակություն է լինելու,

ա) վորտեղ չի լինի արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականություն, այլ կլինի հասարակական, կոլեկտիվ սեփականություն:

բ) վորտեղ չեն լինի դասակարգեր և պետական իշխանություն, այլ կլինեն ինդուստրիայի ու գյուղատնտեսության աշխատավորներ՝ տնտեսապես կառավարվող, վորպես աշխատավորների ազատ ասոցիացիա:

գ) վորտեղ պլանով կազմակերպված ժողովրդական տնտեսությունը կհիմնվի բարձրագույն տեխնիկայի վրա՝ ինչպես ինդուստրիայի, այնպես էլ գյուղատնտեսության բնագավառում:

դ) վորտեղ հակասություններ չեն լինի քաղաքի ու գյուղի, ինդուստրիայի և գյուղատնտեսության միջև:

յե) վորտեղ միջերկրները կբաշխվեն ֆրանսիական հին կոմունիստների սկզբունքի համեմատ՝ «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ պահանջների»:

զ) վորտեղ գիտությունը և արվեստը կգտնվեն այնպիսի պայմաններում, վորոնք միանգամայն բավարար են նրանց լիովին ծաղկման համար:

ե) վորտեղ մի կտոր հացի հոգսից և «աշխարհի հոգսերին» հարմարվելու անհրաժեշտությունից ազատ անհատը կզանա իրապես ազատ: Յեվ այլն և այլն»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Գ. Ի. Կ. Բ. Ե. Բ. Բ.“, Էջ 397-398, „Քուլտյա ամսական առաջին բանվորական պատգամավորություն հե՛ս“, 1927 թ. սեպտեմբերի 9-ին, հայերեն Էջ 407:

«Դուք պետք է վոր հիշելիս լինեք մեր վեճերը XIV համադոմարում: Ինչի՞ մասին եյինք մենք վիճում այն ժամանակ այսպես կոչված «նոր ոպոգիցիայի» հետ:

Միջակի դերի և նշանակության մասին,

գյուղացիության հիմնական մասսաների դերի և նշանակության մասին,

պրոլետարիատի համար, չնայած մեր յերկրի տեխնիկական հետամնացության, սոցիալիստական շինարարության գործում գյուղատնտեսության հիմնական մասսաներին իր հետեից տանելու հնարավորության մասին»:

„Ո պ ո գ ի ց ի ա յ ի մ ա ս ի Գ“, Էջ 692, „Ոպոգիցիայի 1927 թ. ոգոսոսի 8-ի“, „հայաստանական առքիվ“, 1927 թ. ոգոսոսի 5-ի յեվ 9-ի գառեր:

«Գոյություն ունեն արդյոք մեզ մոտ, մեր խորհրդային յերկրում սիջոցներ և ուժեր, վորոնք անհրաժեշտ են կապիտալիզմի վերականգնման հնարավորությունները վերացնելու և վոչնչացնելու համար: Այո, գոյություն ունեն: Յեվ հենց դրա վրա յե հիմնված է Լենինի այն թեզիսի ճշտությունը, թե հնարավոր է խՍՀՄ-ի մեջ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցել: Դրա համար անհրաժեշտ է

պրոլետարական դեկտատուրայի ամրացումը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրացումը,

մեր իշխող բարձունքների զարգացումն ինդուստրացման տեսակետից,

յերկրի ինդուստրիայի և ելեկտրոֆիկացիայի զարգացման արագ թափը,

ժողովրդական ամբողջ տնտեսության փոխադրումը տեխնիկական նոր բազայի վրա,

գյուղացիության մասսայական կոոպերացումը և նրա տնտեսության բերքատվության բարձրացումը,

գյուղացիական անհատական տնտեսությունների ամուրիճանական միավորումը հասարակական տնտեսությունների մեջ,

խորհրտնտեսությունների զարգացումը, քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի սահմանափակումն ու հաղթահարումը և այլն և այլն»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Գ. Ի. Կ. Բ. Ե. Բ. Բ.“, Էջ 486, „Աջ վճանգի մասին Համ. Կլբի մեջ“, 1928 թ. հոկտեմբերի 19-ի գառը, հայերեն Էջ 497-498:

«Դուք ե գալիս, առաջինը՝ վոր քանի դեռ մենք ապրում ենք

մանր-գյուղացիական մի յերկրում, քանի դեռ արմատախիլ չենք արել կապիտալիզմը, կապիտալիզմի համար տնտեսական ավելի ամուր բազա կա, քան թե կոմունիզմի համար: Պատահում ե, վր ծառը կտրում են, իսկ արմատները չեն հանում, ուժեքը չի պատել: Դրանցից էլ բխում է կապիտալիզմի վերականգնման հնարավորությունը մեր յերկրում:

Յերկրորդ, դուրս ե գալիս, վոր կապիտալիզմի վերականգնման հնարավորությունից բացի մեզնում գոյություն ունի նաև սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը, մենք կարող ենք վոչնչացնել կապիտալիզմի վերականգնման հնարավորությունը, մենք կարող ենք քանդել կապիտալիզմի արմատները և վերջնական հաղթանակ տանել կապիտալիզմի նկատմամբ, յեթե ուժեղ աշխատանք կատարենք յերկրի ելեկտրոֆիկացիայի ասպարեզում, յեթե արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և տրանսպորտը դնենք ժամանակակից խոշոր արդյունաբերության տեխնիկական բազայի վրա: Այդտեղից էլ բխում է սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մեր յերկրում:

Վերջապես, դուրս ե գալիս, վոր չի կարելի սոցիալիզմ կառուցել միայն արդյունաբերության մեջ, գյուղատնտեսությունը թողնելով տարերային զարգացման քմահաճույքին—յենելով նրանից, թե գյուղն «ինքը կընա» քաղաքի հետևից: Սոցիալիստական արդյունաբերության առկայությունը քաղաքում՝ հիմնական ֆակտոր է հանդիսանում գյուղի սոցիալիստական վերափոխման համար: Սակայն դա չի նշանակում, վոր այդ ֆակտորը միանգամայն բավարար է: Վորպեսզի սոցիալիստական քաղաքը կարողանա մինչև վերջ իր հետևից տանել գյուղը, դրա համար անհրաժեշտ է, ինչպես ասում է Լենինը, «փոխադրել յերկրի տնտեսությունը, այդ թվում նաև յերկրագործությունը, տեխնիկական նոր բազայի, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Ի. Կ. Բ. Ե. Բ. Ե. Բ.“, Էջ 487-488. „Այս վտանգի մասին Համ. Կլեյն մեջ“, 1928 թ. հոկտեմբերի 19-ի համար. հայերեն Էջ 489-499:

«Ինչպես տեսնում եք, յերկրի ելեկտրոֆիկացմամբ Լենինը հասկանում է վոչ թե առանձին ելեկտրոկայանների մեկուսացած կառուցումը, այլ «յերկրի տնտեսության, այդ թվում նաև

յերկրագործության աստիճանական փոխադրումը նոր տեխնիկական բազայի վրա, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա», վորն այս կամ այն կերպ, ուղղակի կամ անուղղակի կապված է ելեկտրոֆիկացիայի գործի հետ»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Ի. Կ. Բ. Ե. Բ. Ե. Բ.“, Էջ 503. „Յերկրի ինդուստրացման յեզ աջ քեմման մասին Համ. Կլեյն մեջ“, 1928 թ. հոկտեմբերի 19-ի համար. հայերեն Էջ 515:

«Ահա թե Լենինն ինչպես սուր է դնում հարցը — կամ ելեկտրոֆիկացիա, այսինքն՝ «յերկրի տնտեսության, այդ թվում նաև յերկրագործության փոխադրումը նոր տեխնիկական բազայի վրա, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա», կամ վերադարձ դեպի կապիտալիզմ»:

Ահա թե Լենինն ինչպես է հասկանում «գյուղացիության հետ ճիշտ փոխհարաբերությունները» հարցը: Այստեղ բանն այն չէ, վոր մենք փաղաքենք գյուղացուն և այդ համարենք նրա հետ ճիշտ փոխհարաբերությունների սահմանում, վորովհետև փաղաքյանքը մեզ հետո չի տանի, այլ այն, վոր ոգնենք գյուղացուն փոխադրելու իր տնտեսությունը «տեխնիկական նոր բազայի, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա», վորովհետև այդ է գյուղացիությունն աղքատությունից փրկելու հիմնական ուղին:

Իսկ անկարելի յե յերկրի տնտեսությունը փոխադրել տեխնիկական նոր բազայի վրա առանց մեր ինդուստրիայի և ամենից առաջ արտադրության մեջոցների արտադրման զարգացման արագ տեմպի»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Ի. Կ. Բ. Ե. Բ. Ե. Բ.“, „Յերկրի ինդուստրացման յեզ աջ քեմման մասին Համ. Կլեյն մեջ“, 1928 թ. հոկտեմբերի 19-ի համար. հայերեն Էջ 516-517:

«Մենք ամբողջ թափով սլանում ենք ինդուստրացման ուղիով դեպի սոցիալիզմը՝ հետ թողնելով մեր դարավոր «ուսուական» հետամնացությունը: Մենք դառնում ենք մետաղի յերկիր, ավտոմոբիլիզացիայի յերկիր, տրակտորիզացիայի յերկիր: Յեզ յերբ մենք ԽՍՀՄ-ն կնստեցնենք ավտոմոբիլի վրա, իսկ գյուղացուն՝ տրակտորի վրա, այն ժամանակ իրենց «քաղաքակրթությամբ» պարծեցող հարգարժան կապիտալիստները թող փորձեն հասնել

Քիչնամիներին ԽՍՀՄ-ի մեջ: Ապացուցված է, վոր մեր մասնա-
գետների ֆլասարարությունը, կուլակուլթյան հակախորհրդային
յեղուլթյները, մեր ձեռնարկուլթյունների և կառուցումների հրկի-
զումներն ու պայթեցումները վարկավորվում և ներշնչվում են
դրսից: Իմպերիալիստական աշխարհը շահագրգռված է, վորպեսզի
ԽՍՀՄ-ն վոսքի կանգնի և հնարավորուլթյուն ստանա հասնել
կապիտալիստական առաջավոր յերկրներին և անցնել նրանցից:
Այստեղից ել բղխում են նրա ոգնուլթյունը հին աշխարհի ուժերին
ԽՍՀՄ-ում: Հասկանալի յե, վոր այդ հանգամանքը նույնպես էի
կարող հեշտացնել մեր վերակառուցման աշխատանքները:

Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր մեր դժվարություններն այնպիսի դժվարություններ են, վորոնք իրենք պարփակում են իրենց մեջ իրենց հաղթահարման հնարավորությունը: Այդ նշանակում է, վոր մեր դժվարությունների հատկանշական գիծն այն է, վոր նրանք իրենք բազմաթիվ մեղձնրանց հաղթահարելու համար»:

„I. ե գ ի ն զ մ ի հ ա ռ ց ե ռ լ“, էջ 731-734. „Կենսոնական Կամիսեյի Բաղաձայնը Եւրոպէսկոյութունը Համ. Կլիկ 16-րդ համագումարին“, 1930 թ. հունիսի 27--հուլիսի 2-ը. հայերեն էջ 751-754:

«... մենք լույս միայն վերականգնեցինք արդյունաբերությունը, լույս միայն վերականգնեցինք գյուղատնտեսությունը և տրանսպորտը, այլ մենք կարողացանք արդեն ծանր արդյունաբերության, դյուղատնտեսության, տրանսպորտի վերակառուցման վիթխարի գործին ընթացք տալ»:

„Նոր պայմաններ -- սոցիալական, ժողովրդագրական
նոր խնդիրներ“, Եջ 13, 1931 թ. հունիսի 23-ի համար:

«Այժմ բանն այն է, վորպեսզի վերակառուցենք հին արդյունաբերութունը:

Գործն ընթանում է նոր, տեխնիկապես սպառազինված արդյունաբերության ստեղծման մասին Ուրալում, Սիբիրում, Կազակըստանում:

Մոսքը գնում է նորը, խոշոր գյուղատնտեսական արտադրության ստեղծման մատին ՄՍՀՄ-ի հացահատիկային, անասնաբուծական և հումքային ռալոններում:

Խոսքը գնում է նոր յերկաթուղային ցանցի ստեղծման մասին:
ԽՍՀՄ-ի Արևելքի և Արևմուտքի միջև:

„Նոր պայմաններ -- սոցիալական օրնաբանություն
նոր խնդիրներ“, էջ 13, 1931 թ. հունիսի 23-ի ճառք. հայերեն էջ 17:

ՏԵԽՆԻԿԱՆ ՅԵՎ
ՏՆՏԵՍԱՎԱՐ--ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

«...անհրաժեշտ է մեր արտադրական բջիջները ներգրավել ձեռնարկությունների և տրեստների գործերի ընթացքի հետ կապված հարցերի շրջանը: Անհրաժեշտ է գործն այնպես դնել, վորպեսզի բջիջները տեղյակ լինեն մեր ձեռնարկությունների և միավորումների ղեկավարող ռեզանների աշխատանքին, վորպեսզի նրանք կարողանան ազդեցություն ունենալ այդ աշխատանքի վրա: Դուք, վորպես բջիջների ներկայացուցիչներ, գիտեք, թե ինչքան մեծ է մեր արտադրական բջիջների բարոյական պատասխանատվությունն անկուսակցական մասսայի առաջ՝ ձեռնարկության գործերի ընթացքի համար: Վորպեսզի բջիջը կարողանա ղեկավարել և իր հետեից տանել անկուսակցական մասսային գործարանում, վորպեսզի նա կարողանա պատասխանատու լինել գործերի ընթացքի համար ձեռնարկության մեջ,—իսկ նա, անկասկած, ձեռնարկության ձեռքավածքների համար պատասխանատվություն կրում է անկուսակցական մասսայի առաջ,—նա պետք է այդ գործերին տեղյակ լինի, նա պետք է հնարավորություն ունենա այսպես կամ այնպես ազդելու այդ գործերի վրա: Դրա համար ել անհրաժեշտ է, վոր բջիջները ներգրավվեն ձեռնարկության հետ կապված հարցերի քննության մեջ, վորպեսզի ժամանակ առ ժամանակ տրեստի կազմի մեջ մտնող ձեռնարկությունների բջիջների ներկայացուցիչներին տնտեսական կոնֆերենցիաներ հրավիրվեն՝ տրեստի գործերի հետ կապված հարցերի քննության համար»:

„Ո պ ա գ ի ց ի ա յ ի մ ա ս ի ն“, Եջ 24. „Կաւսակցութեան խնդիրներէ մա-
սին“ գեկուցում 1923 թ. դեկտեմբերի 2-ին:

«Նախորդ շրջանը մշակեց օմենագետ-աշխատողի տիպը, վորը պատրաստ է պատասխանել թեորիայի և պրակտիկայի բոլոր

հարցերին: Այժմ ամենազետ-աշխատողի այդ հին տիպը պետք է տեղը գիջի նոր տիպի աշխատողին, վորը ջանում է գործի տեր լինել աշխատանքի մի գորուն բնագավառում: Ինչպես հարկն է ղեկավարելու համար պետք է գիտենալ գործը, պետք է բարեխղճորեն, համբերությամբ և համառությամբ ուսումնասիրել գործը:

Ձի կարելի գյուղում ղեկավարել,

Հիմանադրով գյուղական տնտեսությունը,

Հիմանալով կոռպերացիան,

Ժանոթ չլինելով գների քաղաքականությանը,

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԱԽԻՐԵԼՈՒ ԿՈՄԻՏԵՍԻ ԳՅՈՒԼԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐԵՆՔՆԵՐԻ:

Չի կարելի քաղաքում դեկափարել,

Հիմա՛նալով արդյունաբերությունը,

ՀՈՒՍՏՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿԵՆԿԱԿԸ,

ուշադիր Հիերաբերվելով բանվորների պահանջներին և կարիքներին,

Հիմանալով կոոպերացիան, պրոֆմիլուիցունները, ահմմբա-
յին գործը:

Մական կարելի՛ն Ե արդյո՞ք այդ բոլորը ձեռք բերել մի հարվածով: Դժբախտաբար, չի կարելի: Կուսակցական ղեկավարութունը պատշաճ բարձրության վրա բարձրացնելու համար պետք է նախ և առաջ բարձրացնել կուսակցական աշխատողների վերակր:»

„Լ Ե Ն Ի Ն Ի Պ Մ Ի Կ Ա Ր Գ Ե Ր Բ“, Էջ 218. „Հարցեր յեվ պատասխաններ“
1925 թ. հունիսի 9-ի նաոթ, հայերեն Էջ 220-221:

«Հարց ե ծագում, ինչո՞ւ մենք չկատարեցինք ամբողջ տարվա
սյրանք:

Ի՞նչը խանգարեց: Ի՞նչն եր պակասում:

Պակասում էր գոյությունն ունեցող հնարավորություններն ոգտագործելու համար թյունը:

Պակասում էր գործարանները, ֆաբրիկաներն ու հանքերը ճիշտ ղեկավարելու հմտությամբ:

Մենք ունեւիրենք առաջին պայմանը.

«Որքեկարի» հնարավորությունները պլանի կատարման համար:

17

Սակայն մենք անհրաժեշտ չափով չունենինք յերկրորդ պայմանը.

արտադրությունը ղեկավարելու հատուկ յունը»:

„S a s e u a d a r a b e r i j u g a j i r a b e r i j a m a u b i n“, հշ 4, 1931 թ.
փետրվարի 4-ի նաոք. հայեերեմ հշ 4:

«Այսպիսով, պլանի կատարման համար առաջին պայմանը— «որչեկտիվ հնարավորությունները»—մեզ մոտ ակներև է:

Կամ, արդյոք, մեզնում յերկրորդ պայմանը—այդ հնարավորություններն ոգտագործելու հատուկ յունը:

Այլ կերպ ասած, կամ արդյոք մեզնում գործարանների, ֆաբրիկաների, հանքերի ճիշտ ղեկավարություն: Արդյոք ամեն ինչ բարենաջող է այստեղ:

Դժբախտաբար, այստեղ վոչ ամեն ինչ բարենաջող է: Յեւ մենք, վորպես բայլչեիկներ, ուղղակի և բացարձակ պետք է ասենք այդ: Իհնչ է նշանակում ղեկավարել արտադրությունը: Մեզնում վոչ միշտ բայլչեիկորեն են նայում ձեռնարկությունների ղեկավարության հարցի վրա: Մեզ մոտ յերբեմն կարծում են, վոր ղեկավարել նշանակում է թղթեր ստորագրել: Դա ցավալի յի, բայց դա փաստ է: Յերբեմն ակամա հիշում ես Շչեդրինի պոմպադուրներին: Հրշում եք, ինչպես պոմպադուրուհին խրատում եր ջահել պոմպադուրին.—գլուխդ մի ցավացնի դիտության վրա, մի թափանցի գործի խորքերը, թող ուրիշներն ղբաղվեն ղրանով, դա քո գործը չէ,—քո գործն է ղեկավարել, թղթեր ստորագրել: Պետք է, համոթս մեզ, խոստովանել, վոր մեր, բայլչեիկներն մեջ ել քիչ չեն այնպիսիները, վորոնք ղեկավարում են թղթեր ստորագրելու միջոցով: Իսկ թի, թափանցի գործի խորքը, տիրապետել տեխնիկային, գործի տերը դառնալ,—այդ կողմից—չե ու չէ: Իհնչպես կարող եր պատահել, վոր մենք, բայլչեիկներս, վոր կատարել ենք յերեք հեղափոխություն, հաղթանակով ենք դուրս յեկել քաղաքացիական դաժան պատերազմից, լուծել ենք արդյունաբերություն ստեղծելու խոշորագույն խնդիրը, գյուղացիությանը շրջել ենք դեպի սոցիալիզմի ուղին,—իհնչպես կարող եր պատահել, վոր արտադրության ղեկավարության գործում թղթերով ենք բավականանում:

Այստեղ պատճառն այն է, վոր թուղթ ստորագրելն ավելի հեշտ է, քան արտադրություն ղեկավարելը: Յեւ ահա շատ տնտեսա-

վարներ գնացին այս ամենաքիչ դիմադրության դժով: Այստեղ կա նաև մեր մեղքը, կենտրոնի մեղքը: Տասը տարի առաջ տրեվեց մի լողունդ.—«Քանի վոր կոմունիստները դեռևս ինչպես հարկն է չեն հասկանում արտադրության տեխնիկան, քանի վոր նրանք դեռ կարիք ունեն սովորելու տնտեսություն ղեկավարելը, թող հին տեխնիկներն ու ինժեներները, մասնագետները վարեն արտադրությունը, իսկ դուք, կոմունիստներդ, մի խառնվեք գործի տեխնիկային, բայց չմիջամտելով, ուսումնասիրեցեք տեխնիկան, առանց ձեռները ծալելու ուսումնասիրեցեք արտադրության կառավարման տեխնիկան, վորպեսզի հետո մեզ նվիրված մասնագետների հետ միասին դառնաք արտադրության իսկական ղեկավարներ, գործի իսկական տերեր»: Այսպես եր լողունդը: Իսկ իհնչ ստացվեց իրականության մեջ: Այս ֆորմուլայի յերկրորդ մասը ղեն շարտեցին, վորովհետև սովորելն ավելի դժվար է, քան թղթեր ստորագրելը, իսկ ֆորմուլայի առաջին մասը գոհակացրին, չմիջամտելը բացատրելով վորպես հրաժարումն արտադրության տեխնիկան ուսումնասիրելուց: Ստացվեց անհեթեթություն, ֆլասակար, վտանգավոր անհեթեթություն, վորից վորքան շուտ ազատվենք, այնքան լավ: Կյանքն ինքը բազմիցս ազդարարել է մեզ, վոր այդ գործն անբարենաջող է: Առաջին ազդանշանն եր Շախտիի գործը: Շախտիի գործը ցույց տվեց, վոր կուսկազմակերպությունները և արհմիությունները բավականաչափ հեղափոխական ղզոնություն չեն ունեցել: Նա ցույց տվեց, վոր մեր տնտեսավարները տեխնիկական տեսակետից չափազանց հետ են մնացել, վոր միքանի հին ինժեներներ և տեխնիկներ, առանց վերահսկողության աշխատելով, ավելի դյուրությամբ են գլորվում դեպի ֆլասաբարության ուղին, մանավանդ վոր շարունակ արտասահմանի մեր թշնամիները նրանց անհանդուրստացնում են իրենց «առաջարկներով»: Յերկրորդ ազդանշանը—«արդյունաբերական կուսակցության» պրոցեսն եր:

Իհարկե, ֆլասաբարության հիմքն է կազմում դասակարգային պայքարը: Իհարկե, դասակարգային թշնամին կատաղի դիմադրություն է ցույց աալիս սոցիալիստական հարձակմանը: Սակայն ֆլասաբարության այդպիսի փարթամ ծաղկումը բացատրելու համար միայն այդ — քիչ է:

Իհնչպես կարող է պատահել, վոր ֆլասաբարությունն այդպիսի լայն չափեր է ընդունել: Ո՞վ է մեղավոր դրանում: Դրանում մենք մե-

դավոր ենք: Յեթե մենք տնտեսութեան ղեկավարումն այլ հիմ-
քերի վրա դրած լինեյինք, յեթե մենք ավելի ջանք դործադրած
լինեյինք տեխնիկական ուսումնասիրելու, տեխնիկային տիրապե-
տելու գործի վրա, յեթե մենք ավելի հաճախ և ավելի խելացի
կերպով միջամտեյինք տնտեսութեան ղեկավարմանը — փաստա-
բարեներին չէր հաջողվի այդքան փլուզումը:

Պետք է, վոր մենք ինքներս մասնագետ, գործի տեր դառնանք,
պետք է յերեսով շուռ գալ դեպի տեխնիկական գիտելիքները, —
անաթե ուր ե մղել մեզ կյանքը: Սակայն վոչ առաջին, վոչ ել
յերկրորդ ազդանշանը դեռ անհրաժեշտ չընդհարձը չապահովե-
ցին: Ժամանակ է, վաղուց ժամանակ է յերեսով դառնալ դեպի
տեխնիկան: Ժամանակ է դեն շարտել հին լողուններ, մեռած լո-
գուններ՝ տեխնիկային չխառնվելու մասին, և ինքներս դառնանք
մասնագետներ, գործի հմուտներ, ինքներս դառնանք գործի լիա-
կատար տերը:

Հաճախ հարցնում են, ինչո՞ւ մեզնում միանձնյա ղեկավարու-
թյուն չկա: Նա չկա և չի կարող լինել, մինչև վոր մենք չտիրա-
պետենք տեխնիկային: Մինչև վոր մեզ, բայց չեմք ինքներս մեջ չի-
նեն տեխնիկայի, եկոնոմիկայի և ֆինանսների հարցերին լավ
ծանոթ բավարար թվով մարդիկ, մեզնում իսկական միանձնյա
ղեկավարություն չի լինի: Գրեցեք վորքան ուզում եք բանաձևեր,
յերգվեցեք ինչ խոսքերով ուզում եք, բայց յեթե չտիրապետեք
գործարանի, ֆաբրիկայի, հանքահորի տեխնիկային, եկոնոմիկա-
յին և ֆինանսներին — բան դուրս չի գա, միանձնյա ղեկավարու-
թյուն չի լինի:

Հետևադեպ խնդիրն այն է, վոր մենք ինքներս տիրապետենք
տեխնիկային, ինքներս դառնանք գործի տերը: Միայն դա յե
յերաշխիք տալիս, վոր մեր պլանները լիովին կիրառործվեն և
միանձնյա ղեկավարությունը կկիրառվի:

Այդ գործը, իհարկե, հեշտ չէ, սակայն միանգամայն հաղթահարելի
յի: Գիտությունը, տեխնիկական փորձը, գիտելիքները — այս
բոլորը ձեռք է բերվում աշխատանքով: Այսօր չկա, վաղը կլինի:
Այսօր զլխավորն այն է, վոր մենք բայց չեմք լիցիտացիոն
կոլեկտիվ ունենանք տեխնիկային տիրապետելու, արտադրութեան
գիտությունը նվաճելու: Բուռն ցանկություն ունենալով, կարելի
յի հասնել ամեն ինչի, կարելի յի հաղթահարել ամեն ինչ:

„ՏՈՒՆՔԱՎԱՐՆԵՐԻ ԽԱՂԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ“, Եջ 9-12, 1931
թվի փետրվարի 4-ի համար. հայերեն Եջ 9-12:

«Ձեմ կարող տեսլ, վոր տնտեսություն ղեկավարելու ապարե-
զում այս տարիների ընթացքում մեզնում վոչինչ չի արվել:
Արվել է, և նույնիսկ շատ բան: Մենք մինչպատերազմյանի համե-
մատութեամբ արդյունաբերութեան արտադրանքը կրկնապատկե-
ցինք: Մենք ստեղծեցինք ամենախոշոր գյուղատնտեսական ար-
տադրությունն աշխարհում: Սակայն մենք ավելի գործ կատարած
կլինեյինք, յեթե այդ ժամանակամիջոցում աշխատեյինք իրոք
տիրապետել արդյունաբերութեանը, նրա տեխնիկային, նրա ֆի-
նանսական-տնտեսական կողմին:

Մաքսիմումը տաս տարում մենք պիտի կտրենք այն տարածու-
թյունը, վորով հետ ենք մնացել կապիտալիզմի առաջավոր յեր-
կրներեց: Դրա համար մեզնում կան բոլոր «ոբյեկտիվ» հնարա-
վորությունները: Պակասում է միայն այդ հնարավորություն-
ներն իսկապես ոգտագործելու հմտությունը: Իսկ դա կախված է
մեզնից և մի միայն մեզնից: Ժամանակն է, վոր մենք սո-
վորենք ոգտագործել այդ հնարավորությունները: Ժամանակն է,
վոր մենք վերջ տանք արտադրութեանը չմիջամտելու ներած
դիրքավորմանը: Ժամանակն է յուրացնել մի ուրիշ, ներկա շըր-
ջանին համապատասխան, նոր դիրքավորում — միջամտել ամեն
բանի: Յեթե դու գործարանի ղերեկտոր ես, — միջամտիր բոլոր
գործերին, վոչինչ բաց մի թողնի, սովորիր և կրկին անգամ սովո-
րիր: Բայց չեմք ինքներս պետք է տիրապետեն տեխնիկային: Ժամա-
նակն է, վոր բայց չեմք ինքներս մասնագետներ դառնա: Վե-
րականուցման շըջանում տեխնիկական լուծում է ամեն ինչ: Յեվ
տեխնիկական ուսումնասիրել չցանկացող, տեխնիկային տիրապետել
չցանկացող տնտեսավարն անեկդոտ է և վոչ տնտեսավար:

Ասում են, թե դժվար է տիրապետել տեխնիկային: Ծիշտ չէ: Չկան
այնպիսի բերդեր, վոր բայց չեմք ինքներս չկարողանան նվաճել: Մենք
լուծել ենք մի շարք ամենադժվար խնդիրներ: Մենք տապալեցինք
կապիտալիզմը: Մենք դրավեցինք իշխանությունը: Մենք կա-
ռուցեցինք խոշորագույն սոցիալիստական ինդուստրիա: Մենք
միջակ գյուղացուն շըջեցինք դեպի սոցիալիզմի ուղին: Շինա-
րարութեան տեսակետից ամենակարևորը մենք արդեն արել ենք:
Մեզ քիչ բան է մնում — ուսումնասիրել տեխնիկան, տիրապետել
գիտութեանը: Յեվ յերբ այդ անենք, մեզնում կլինեն այնպիսի

տեմպեր, վորոնց մասին չենք ել համարձակվում յերազել հիմա՝
Յեկ մենք կանենք ալդ, յեթե ցանկանանք իսկապես»։

„Տ ճ Տ Ե Ս Վ Ա Ր Դ Ե Ր Ի Դ Ե Պ Ի Ր Դ Ե Ր Ի Վ Ս Ս Ի Ն“, Էջ 14-15.
1931 թվի փետրվարի 4-ի նաոթ, հայերեն Էջ 15-16:

«Ապա դրա համար պահանջվում է,

վոր մեր տնտեսական ղեկավարները ձեռնարկությունները ղեկավարեն վոչ թե «ընդհանուր կերպով», վոչ թե «ողից», այլ կոնկրետ կերպով, առարկայորեն, վոր նրանք յուրաքանչյուր հարցին մոտենան վոչ թե ընդհանուր շաղակրատությամբ, այլ խիստ գործնականորեն, վոր նրանք չսահմանափակվեն թղթե գրություններով կամ ընդհանուր ֆրազներով ու լոգոնշաներով, այլ մտնեն գործի տեխնիկայի մեջ, թափանցեն գործի մանրամասնություններին մեջ, թափանցեն «մանրունքներին» մեջ, վորովհետև «մանրունքից» ալժմ կառուցվում են մեծ գործերը:

„Նոր պայմաններ -- սոցիալական շինարարություն
նոր խնդիրներ“, հղ 15, 1931 թ. հունիսի 23-ի համր. հայերեն հղ 19:

«Պետք է վերջ տալ թղթե «ղեկավարմանը» և անցնել իրական, գործնական, բայժեիկյան աշխատանքի: Թող միավորման գլխին կանգնած միա միավորման նախագահը և միջանի տեղակալները՝ Նրանք միանգամայն բավական են միավորումը կառավարելու համար: Կոլեգիայի մնացած անդամներին ավելի լավ կլինի իջեցնել ցածր՝ գործարանները: Այդ շատ ավելի ոգտավոր կլինի թե նրանց համար և թե գործի համար:

Դրա համար պահանջվում են հաս, վոր միավորումներին նախագահներն ու նրանց տեղակալներն ավելի հաճախ շրջագայեն գործարանները, ավելի յերկար մնան այնտեղ աշխատանքի համար, ավելի մոտիկից ծանոթանան գործարանի աշխատողներին հետև ղ ղ միայն սովորեցնեն տեղական մարդկանց, այլև սովորեն նրանցից: Կարծել, վոր այժմ կարելի յե գրասենյակում, գործարանից հեռու նստած ղեկավարել—նշանակում ե մոլորության մեջ ընկնել: Գործարանները ղեկավարելու համար պետք ե ավելի հաճախ շփումն ունենալ ձեռնարկության աշխատողներին հետ, պետք ե կենդանի կապ պահպանել նրանց հետ»:

„Նոր պայմաններ--սնեստանկան օրնարարություն
նոր խնդիրներ“, էջ 16, 1931 թ. հունիսի 23-ի ճառը, հայերեն էջ 20:

3.

ՏԵԽՆԻԿԱՆ

ՅԵՎ ԽՈՅՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՏԵՄՊԵՐԸ

«Վերադասելի տնտեսության ֆեոդալական սխտեմն ապացուցեր իր դերազանցությունը տնտեսության ստրկատիրական սխտեմնի նկատմամբ, այդ բանի համար, կարծեմ, պահանջվեց մոտավորապես 200 տարի, յեթե վոչ ավելի: Այո, այլ կերպ էլ չէր կարող լինել, վերսվհետև այն ժամանակ զարգացման տեմպը խիստ դանդաղ էր, իսկ արտադրության տեխնիկական ավելի քան պրիմիտիվ:

Վերադառնալիս անտեսութեան բուրժուական սխառեմն ապացուցեց իր դերադանցութիւնը անտեսութեան ֆեոդալական սխառեմին կատմամբ, այդ բանի համար պահանջվեց մոտավորապես հարիւր տարի կամ դրանից ել պակաս: Արդեւ ֆեոդալական հասարակութեան ծոցում անտեսութեան բուրժուական սխառեմը ցույց տվեց, վսր նա բարձր է կանգնած, շատ բարձր, քան անտեսութեան ֆեոդալական սխառեմը: Ժամկետներէ մեջ յեղած տարբերութիւնն աշտեղ բացատրվում է զարգացման ավելի արագ տեմպով և անտեսութեան բուրժուական սխառեմի ավելի զարգացած տեխնիկայով:

Այդ ժամանակիւնից տեխնիկան հանդես ե բերել աննախընթաց հաջողութիւններ, իսկ զարգացման տեմպն ուղղակի կատաղի յե դարձել: Հարց ե առաջ գալիս. ընկ. Տրոցկին ի՞նչ հիմք ունի յենթադրելու, վր տնտեսութեան սոցիալիստական սիստեմին՝ տնտեսութեան կապիտալիստական սիստեմի նկատմամբ իր գերազանցութիւնն ապացուցելու համար կապահանջի ինչ-Վոր անտավորապէս հարյուր տարի: Միթե այն փաստը, Վոր արտադրութեան գլխին կանգնած կլինեն Վոչ թե պրտաբույծներ, այլ իրենք արտադրողները—միթե այդ փաստը չի հանդիսանում մեծագույն ազդակն այն բանի, Վոր տնտեսութեան սոցիալիստական սիստեմը բոյոր շանսերը կունենա, Վորպեսզի յոթմղոնանի

քայլերով առաջ շարժի տնտեսությունը և ապացուցի իր գերազանցությունը տնտեսության կապիտալիստական սխտեմի նկատմամբ ավելի կարճ ժամկետում: Միթե այն փաստը, վոր սոցիալիստական տնտեսությունը հանդիսանում է ամենից ավելի միավորված տնտեսությունը, վոր սոցիալիստական տնտեսությունը վարվում է պլանային կարգով,— միթե այս փաստը չի խոսում այն բանի ոգտին, վոր սոցիալիստական տնտեսությունը կունենա բոլոր առաջնությունները, վորպեսզի ապացուցի իր գերազանցությունը համեմատաբար կարճ ժամանակում տնտեսության կապիտալիստական սխտեմի նկատմամբ, վորը ծվառվում է ներքին հակասություններով և վորին ուսումնաքայլում են ձգնաժամերը:

Այս բոլորից հետո պարզ չէ՞ միթե, վոր այստեղ 50—100 տարվա հեռանկարով հաշիվ բռնելը— դա նշանակում է հիմադք լինել ահաբեկված քաղքենու սին հավատով՝ տնտեսության կապիտալիստական սխտեմի ամենակարողության վերաբերմամբ»:

„Ա պ ո գ ի ց ի ա յ ի մ ա ս ի ն“, էջ 537-538, „Նորից սոցիալ-դեմոկրատիկ քննարկ մասին մեր կուսակցության մեջ“, գեկուցումը 1926 թ. դեկտեմբերի 7-13:

«Մենք իշխանության հասանք մի յերկրում, վորի տեխնիկան խիստ հետամնաց է: Այս կամ այն չափով նոր տեխնիկայի վրա հենված արդյունաբերական սակավածիվ խոշոր միավորների կողքին մենք հարյուրավոր և հազարավոր ֆաբրիկաներ ու գործարաններ ունենք, վորոնց տեխնիկան ներկայիս նվաճումների տեսակետից վոչ մի քննադատության դիմանալ չի կարող: Մինչդեռ մեր շուրջը կան մի շարք կապիտալիստական յերկրներ, վորոնք արդյունաբերական շատ ավելի զարգացած և կատարելագործված տեխնիկա ունեն, քան մեր յերկիրը: Նայեցեք կապիտալիստական յերկրներին, և դուք կտեսնեք, վոր տեխնիկան այնտեղ վոչ միայն գնում, այլ ուղղակի վազում է առաջ, հետ թողնելով արդյունաբերական տեխնիկայի հետամնաց ձևերը: Յեով ահա դուրս է գալիս, վոր մի կողմից մեր յերկրում մենք ունենք աշխարհիս ամենաառաջավոր իշխանությունը—խորհրդային իշխանությունը, իսկ մյուս կողմից մենք ունենք արդյունաբերական չափազանց հետամնաց տեխնիկա, վորը մեզնում սոցիալիզմի և խորհրդային իշխանության բազան է: Կարծում եք»

արդյոք, թե կարելի չէ հասնել սոցիալիզմի վերջնական հաղթանակին այս հակասության առկայության պայմաններում: Ի՞նչ պետք է անել հիշյալ հակասությունը լիկվիդացիայի յենթարկելու համար: Դրա համար պետք է ձգտել այն բանին, վոր կարողանանք հասնել և գերազանցել կապիտալիստական զարգացած յերկրների առաջավոր տեխնիկան: Կապիտալիստական առաջավոր յերկրներին մենք հասել և գերազանցել ենք նոր կարգ՝ խորհրդային իշխանություն հաստատելու իմաստով: Այս լավ է: Բայց սա քիչ է: Սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար դեռևս անհրաժեշտ է հասնել այդ յերկրներին և գերազանցել նրանց նաև տեխնիկական-տնտեսական տեսակետից: Կամ մենք այդ նպատակին կհասնենք, կամ մեզ կձգմեն: Այս ճիշտ է վոչ միայն սոցիալիզմի կառուցման տեսակետից: Այս ճիշտ է նաև կապիտալիստական շրջապատման պայմաններում մեր յերկրի անկախության պաշտպանության տեսակետից: Անհնար է պաշտպանել մեր յերկրի անկախությունը՝ արդյունաբերական բավարար բազա չունենալով պաշտպանության համար: Անհնար է ստեղծել նման արդյունաբերական բազա՝ չունենալով բարձր արդյունաբերական տեխնիկա:

Ահա թե ինչու համար է մեզ անհրաժեշտ և ահա թե ինչ է թելադրում մեզ ինդուստրիայի զարգացման արագ տեմպը»:

„Լ Ե Ն Ի Ն Ի Ղ Մ Ի Կ Ա Ր Գ Ե Ր Ը“, էջ 498-499. „Յերիքի ինդուստրացման յեվ աջ քննարկ մասին Համ. Կլբի մեջ“, 1928 թվի նոյեմբերի 19-ի նաոք. հայերեն էջ 509-510:

«Այն հարցը, թե մենք տեխնիկական-տնտեսական տեսակետից պետք է հասնենք և անցնենք առաջավոր կապիտալիստական յերկրներին, այս հարցը մեզ, բայցեհիկներին համար նորություն, անսպասելի բան չէ: Այդ հարցը մեզ մոտ զրվում էր դեռ 1917 թվին, նախահոկտեմբերյան ժամանակաշրջանում»:

„Լ Ե Ն Ի Ն Ի Ղ Մ Ի Կ Ա Ր Գ Ե Ր Ը“, էջ 500. „Յերիքի ինդուստրացման յեվ աջ քննարկ մասին Համ. Կ(բ)Կ մեջ“, 1928 թ. նոյեմբերի 19-ի նաոք. հայերեն էջ 511:

«Այժմ, յերբ մենք ունենք վորոշ եյական նվաճումներ մեր տեխնիկական-տնտեսական հետամնացությունն արմատապես լիկվիդացիայի յենթարկելու համար, մենք կարող ենք ձևափոխել և»

«Վորպեսզի իրագործվի կուսակցության դիրեկտիվը մեր յերկրի ինդուստրացման մասին, անհրաժեշտ է, բացի բոլոր մյուս բաներից, ստեղծել նոր մարդկանց կադրեր, արդյունաբերության նոր կառուցողների կադրեր: Վոչ մի խնդիր, իսկ առանձնապես այնպիսի մեծ խնդիր, ինչպիսին մեր յերկրի ինդուստրացումն է, չի կարող իրագործվել առանց կենդանի մարդկանց, առանց նոր մարդկանց, առանց նոր կառուցողների կադրերի»:

„ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԻՈՒՐՅԱՆ ՏՏՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՐՅԱՆ ԲԱՍԻՆԻ“, Էջ 20-21- 1925 թ. ապրիլի 13-ի գեկուցումը:

«Մենք այժմ քաղաքացիական կոիմսերի ֆրոնտից անցել ենք ինդուստրիայի ֆրոնտը: Համապատասխան դրան ել այժմ մեզ հարկավոր են նոր հրամանատարներ ինդուստրիայի բնագավառում, ֆաբրիկաների և գործարանների լավ դիրեկտորներ, տրեստային լավ աշխատողներ, գործարար առևտրականներ, սինդիկատային գործարար աշխատողներ, արդյունաբերության շինարարության խորամիտ պլանավորողներ: Այժմ մենք պետք է կոփենք նոր գնդապետներ ու բրիգադի հրամանատարներ, դիվիզիայի պետեր ու կորպուսի հրամանատարներ՝ տնտեսության, արդյունաբերության բնագավառում: Առանց այդպիսի մարդկանց մենք չենք կարող և վոչ մի քայլ անել դեպի առաջ:

Դրա համար ել խնդիրն այն է, վորպեսզի ստեղծենք ինդուստրիա կառուցողների բազմահազար կադրեր բանվորության և խորհրդային ինտելիգենցիայի շարքերից, այն ինտելիգենցիայի, վորն իր բախտը կապել է բանվոր դասակարգի բախտի հետ և վորը մեզ հետ միասին կառուցում է մեր տնտեսության սոցիալիստական ֆունդամենտը:

Նույնիսկ այն է, վորպեսզի ստեղծենք նման կադր և նրան առա-

ջին պլանի վրա քաշենք, ամեն կերպ ոժանդակութուն ցույց տալով նրան»:

„ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԲԻՈՒՐՅԱՆ ՏՏՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՐՅԱՆ ԲԱՍԻՆԻ“, Էջ 21. 1925 թ. ապրիլի 13-ի գեկուցումը:

«Անցնենք այժմ մեր արդյունաբերությունը տեխնիկական ինտելիգենցիայի նոր կադրերով ապահովելու խնդրին:

Նոսքն արդյունաբերության գծով մեր ունեցած դժվարությունների մասին է, վորոնք հայտնաբերվեցին Շախտիի գործի կապակցությամբ:

Ինչհետև է Շախտիի գործի ելությունն արդյունաբերության բարելավման տեսակետից: Շախտիի գործի ելությունն ու իմաստն այն է, վոր մենք գրեթե անգին դուրս յեկանք և միանգամայն հետամնաց, խայտառակորեն հետամնաց՝ մեր արդյունաբերությունը բանվոր դասակարգի գործին նվիրված մասնագետների գեթ վորոշ նվազագույն քանակությամբ ապահովելու տեսակետից: Շախտիի գործից բղխող դասն ասում է մեզ, վոր անհրաժեշտ է ուժեղացնել և արագացնել բանվոր դասակարգին պատկանող մարդկանցից դուրս յեկած, սոցիալիզմի գործին նվիրված և տեխնիկապես մեր սոցիալիստական արդյունաբերությունը ղեկավարելու ընդունակ նոր տեխնիկական ինտելիգենցիայի ստեղծման տեմպը:

Այս չի նշանակում, իհարկե, թե մենք մի կողմ ենք նետում այն մասնագետներին, վորոնք խորհրդայնորեն չեն մտածում և կամ վորոնք կոմունիստներ չեն, բայց համաձայն են աշխատակցելու խորհրդային իշխանության հետ: Իհարկե, չի նշանակում: Մենք ապագայում ևս բոլոր ուժերով և ըստամենայնի կներգրավենք մեր աշխատանքի մեջ այն անկուսակցական մասնագետներին և անկուսակցական տեխնիկներին, վորոնք պատրաստ են խորհրդային իշխանության հետ ձեռք ձեռքի տված առաջ ընթանալ մեր արդյունաբերության շինարարության գործում: Մենք բնավ չենք պահանջում, վոր նրանք այժմ ևեթ հրաժարվեն իրենց տեսակետներից և կամ փոխեն իրենց այդ հայացքներն անմիջապես: Մենք միայն մի բան ենք պահանջում՝ այն, վորպեսզի նրանք ազնվաբար աշխատակցեն խորհրդային իշխանության հետ, յերբ նրանք կամավոր կերպով համաձայնվել են դրան:

Սակայն խնդիրն այն է, վոր խորհրդային իշխանություն հետ

ձեռք ձեռքի տված առաջ ընթանալու համար պատրաստ այդպիսի մարդկանց թիվը հին մասնագետներից գնալով հարաբերաբար նվազում է: Խնդիրն այն է, վոր բացարձակապես անհրաժեշտ է նրանց տեղը նոր փոխարինողներ ստեղծել: Յեվ անա կուսակցությունը գտնում է, վոր այդ նոր փոխարինողներին պետք է ստեղծել արագացած տեմպով, յեթե մենք չենք ուղում կանգնած լինել նորանոր անակնկալների առջև: Յեվ այդպիսիներին պետք է ստեղծել հենց բանվոր դասակարգի մարդկանցից: Շենց այս ել նշանակում է ստեղծել տեխնիկական մի նոր ինտելիգենցիա, վորն ընդունակ կլինի բավարարել մեր արդյունաբերության կարիքները:

Փաստերը ցույց տվին, վոր Լուսժողովմատը չկարողացավ ըստ հարկին լուծել այս կարևորագույն խնդիրը: Մենք վոչ մի յերաշխիք չունենք, վոր ինքն իրեն հանձնված է, իդեպ, արտադրության հետ քիչ կապված Լուսժողովմատը, իր ինքնուրույնության և կոնսերվատիզմի պայմաններում՝ իվիճակի կլինի մոտիկ ապագայում լուծելու այս խնդիրը: Այս իսկ պատճառով կուսակցությունը յեկել է այն յեղրակացության, վոր տեխնիկական նոր ինտելիգենցիայի ստեղծման աշխատանքն անհրաժեշտ է բաժանել յերեք ժողովմատների միջև՝ Լուսժողովմատի, ժողտնտղերխորհի և Հաղորդակցության ճանապարհների ժողովմատի միջև: Կուսակցությունը գտնում է, վոր այս ուղին առավելապես նպատակահարմարն է, վորն իվիճակի յե այս կարևորագույն գործի համար ապահովել զարգացման անհրաժեշտ տեմպը: Այստեղից ել բղխում է միքանի տեխնիկական բարձրագույն դըպրոցների հանձնումը ժողտնտղերխորհին և Հաղորդակցության ճանապարհների ժողովմատին: Այս չի նշանակում, իհարկե, թե արագորեն տեխնիկական նոր ինտելիգենցիա ստեղծելու խնդիրներն սպառվում են բարձրագույն տեխնիկական դպրոցների հանձնումով: Կասկած չկա, վոր ուսանողության ապահովումը նյութական տեսակետից կարևորագույն դեր պիտի խաղա այս խնդրում:

Այս իսկ պատճառով խորհրդային իշխանությունը կանգնեց այն տեսակետին, վոր նոր կադրեր ստեղծելու ծախսերն իրենց տեսակարար կըլի տեսակետից հավասարեցրեց արդյունաբերության կապիտալ շինարարության ծախսերին և վորոշեց այդ գոր-

ծի համար հատկացնել լրացուցիչ կերպով տարեկան քառասուն միլիոն ռուբլի»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Ի. Կ. Բ. Ե. Բ. Ե. Բ.“, Եջ 477-478, „Համ. Կլբի ԿԿ ԽՍՀՄ-ի պլենումի արդյունքների մասին“, 1928 թ. ԽՍՀՄի 13-ի գեկուցումը. Խայերեն Եջ 489-491:

«Շախտիի գործի դասերը չեն կարող ապարդյուն անցնել մեր կուսակցության համար: Յես կարծում եմ, վոր այդ դասերը կհարկադրեն մեզ ամենայն սրությամբ դնելու տեխնիկական նոր ինտելիգենցիա ստեղծելու խնդիրը, վորն ընդունակ կլինի սպասարկելու մեր սոցիալիստական արդյունաբերությանը: Իդեպ, դուք տեսնում եք, վոր տեխնիկական ինտելիգենցիայի պրոբլեմի լուծման խնդրում մենք արդեն արել ենք առաջին կըլը քայլը»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Ի. Կ. Բ. Ե. Բ.“, Եջ 479, „Համ. Կլբի ԿԿ ԽՍՀՄ-ի պլենումի արդյունքների մասին“, 1928 թ. ԽՍՀՄի 13-ի գեկուցումը. Խայերեն Եջ 492:

«... մենք, Շախտիի գործի կապակցությամբ, նորից հարց առաջադրեցինք՝ տնտեսական նոր կադրեր, բանվոր դասակարգի մարդկանցից կարմիր մասնագետներ ստեղծելու հարցը՝ հին մասնագետներին փոխարինելու համար»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Ի. Կ. Բ. Ե. Բ.“, Եջ 534, „Աջ քեման մասին Համ. Կլբի մեջ“, 1929 թ. ապրիլի 6. Խայերեն Եջ 548:

«Շախտիցիներն» այժմ նստած են մեր արդյունաբերության բոլոր ճյուղերում: Նրանցից շատերն արդեն բռնված են, բայց դեռևս վոչ-բոլորը: Բուրժուական ինտելիգենցիայի փաստարարությունն՝ արշավող սոցիալիզմին ընդդիմադրելու ամենավտանգավոր ձեռքից մեկն է»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Ի. Կ. Բ. Ե. Բ.“, „Աջ քեման մասին Համ. Կլբի մեջ“, Եջ 536, 1929 թ. ապրիլի 6. Խայերեն Եջ 551:

«Ծանր արդյունաբերության կառուցման խնդիրը դեմ է առնում վոչ միայն կուսակցման պրոբլեմին: Նա դեմ է առնում նաև կադրերի պրոբլեմին՝ այն է—

ա) տասնյակ-հազարավոր խորհրդայնորեն տրամադրված տեխ-

նիկներին և մասնագետներին սոցիալիստական շինարարութ-
յանը հաղորդակից անելու և
բ) բանվոր դասակարգի շարքերից նոր կարմիր տեխնիկներ և
կարմիր մասնագետներ պատրաստելու պրոբլեմին: Յեթե
կուտակման պրոբլեմը հիմնականում կարելի չե լուծված համա-
բել, ապա կադրերի պրոբլեմը դեռևս սպասում է իր լուծմանը:
Իսկ կադրերի պրոբլեմը ներկայումս, արդյունաբերության տեխ-
նիկական ռեկոնստրուկցիայի պայմաններում, սոցիալիստական
շինարարության վճռական պրոբլեմն է»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Գ. Ի. Կ. Ե. Գ. Բ.“, էջ 602. „Մեծ բեկման տարին“: Հոկտեմ-
բերի 12-րդ տարեգրքի առթիվ. հայերեն էջ 620:

«Ասում են, թե տնտեսության վիճակը շատ բանով կախված է
տնտեսական կադրերի տեխնիկական և կադմակերպական կոմ-
վածությունից: Դա, իհարկե, ճիշտ է: Զի՞ք բացատրվում արդյոք
կապիտալիստական յերկրները՝ ճգնաժամը և ՈՍՀՄ վերելքը տեխ-
նիկական կադրերի պակասությունումը նրանց մոտ և դրանց առա-
տությունը մեզ մոտ: Վե՛հ, իհարկե, վո՛հ: Ամենքին հայտնի չե,
վոր տեխնիկապես մարզված կադրեր կապիտալիստական յերկրնե-
րում անհամեմատ ավելի շատ կան, քան մեզ մոտ, ՈՍՀՄ-ում:
Մենք յերբեք չենք թագցրել և մտադիր չենք թագցնելու, վոր
տեխնիկայի ասպարեզում մենք գերմանացիներին, անգլիացիներ-
ին, ֆրանսիացիներին, իտալացիներին և ամենից առաջ ամերիկա-
ցիներին աշակերտներն ենք: Վո՛հ, բանն այստեղ չի վճռվում տեխ-
նիկական կադրերի առատությունումը կամ պակասությունումը, թեև
կադրերի պրոբլեմը լուրջ նշանակություն ունի ժողովրդական
տնտեսության զարգացման համար»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Գ. Ի. Կ. Ե. Գ. Բ.“, էջ 745-746. „Կենտրոնական կոմիտեի
ֆաբրիկայի հասցեականքումը Համ. Կ(Բ)Կ 14-րդ համագումարին“, 1930 թ.
հունիսի 27-հուլիսի 2. հայերեն էջ 767:

«Ի՞նչն է պատճառը, վոր ՈՍՀՄ-ն, չնայած նրա կուլտուրական
հետամնացության, չնայած կապիտալների պակասության, չնա-
յած տեխնիկապես կոմված տնտեսական կադրերի պակասու-
թյան, գտնվում է աճող տնտեսական վերելքի վիճակում
և տնտեսական շինարարության ֆրոնտում ունի վճռողա-
կան հաջողություններ, իսկ առաջավոր կապիտալիս-

տական յերկրները, չնայած կապիտալների առատության, չնայած
տեխնիկական կադրերի առատության և կուլտուրականության
ավելի բարձր մակարդակի, գտնվում են աճող տնտեսական
ճգնաժամի վիճակում, տնտեսական զարգացման ասպարեզում
կրում են պարտություն պարտության հետևից:

Պատճառը—մեր և կապիտալիստների տնտեսության սիս-
տեմների տարբերությունն է:

Պատճառը—տնտեսության կապիտալիստական սիստեմի
սնանկությունն է:

Պատճառը տնտեսության խորհրդային սիստեմի առավե-
րություններն են՝ համեմատած կապիտալիստական
սիստեմի հետ»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Գ. Ի. Կ. Ե. Գ. Բ.“, էջ 746. „Կենտրոնական կոմիտեի ֆա-
բրիկայի հասցեականքումը Համ. Կ(Բ)Կ 14-րդ համագումարին“, 1930 թ. հու-
նիսի 27-հուլիսի 2. հայերեն էջ 768:

«Այնուհետև գալիս է կադրերի պրոբլեմը, ինչպես ար-
դյունաբերության ասպարեզում, նույնպես և գյուղատնտեսու-
թյան ասպարեզում: Բոլորին հայտնի չե մեր տնտեսական կադ-
րերի, մեր մասնագետների, տեխնիկների և տնտեսական աշխա-
տողների թույլ տեխնիկական կոմվածությունը: Գործը բարդա-
նում է նրանով, վոր մասնագետների մի մասը, վորը կապված է
նախկին տերերի հետ և խթանվում է արտասահմանից, անցել
եր ֆրասարական գործի գլուխը: Գործն էլ ավելի չե բարդա-
նում նրանով, վոր մեր տնտեսավար «կոմունիստներին» մի ամ-
բողջ շարք չհայտարարեց այդ գործում հեղափոխական զգոնու-
թյուն և հաճախ հոգեկան գերություն մեջ եր ընկնում ֆրասա-
րար տարրերի մոտ: Մինչդեռ մեր առջև կանգնած են ամբողջ
ժողովրդական տնտեսության վերակառուցման հսկայական խըն-
դիրներ, վորոնք պահանջում են նոր տեխնիկային տիրապետե-
լուն ընդունակ մեծ քանակով նոր կադրեր: Այս կապակցու-
թյամբ կադրերի պրոբլեմը մեզնում վերածվեց իսկապես խիստ
կենսական հարցի:

Այդ պրոբլեմի լուծումը մեզնում տեղի չե ունենում հետևյալ
ձեռնարկումների գծով.

- 1) վճռական պայքար ֆրասարաների դեմ.
- 2) մաքսիմում հոգացողություն և նրբազգացողություն մասնագետ

տեխնիկների հսկայական մեծամասնության նկատմամբ, վորոնք սահմանահատվել են ֆինասարարներից (յես նկատի ունեմ վոչ թե Ուստրյալովի տիպի մեծախոս ու ցուցամոլ մարդկանց, այլ իսկական դիտական աշխատողների, վորոնք աշխատում են բանվոր դասակարգի հետ միասնաբար, առանց խորամանկորեն իմաստա-
կելու)։

3) արտասահմանի տեխնիկական ոգնություն կազմակերպումը։

4) մեր տնտեսավարների գործողումն արտասահման՝ սովորե-
լու և առհասարակ տեխնիկայում փորձառություն ձեռք բերելու համար։

5) տեխնիկական-դպրոցական հաստատությունների հանձնումն համապատասխան տնտեսական կազմակերպություններին, վար-
պետի նրանք ամենաարագ կերպով բավարար թվով տեխնիկ-
ներ ու մասնագետներ պատրաստեն բանվոր դասակարգի մարդ-
կանցից»։

„1. Ե Ե Ի Ե Ի Գ Բ Ի Կ Ե Բ Ե Բ“, Եջ 751-752. „Կենսաբանական կամբսեյի
հաղափարական հաղթանակությունը Համ. Կլբի 14-րդ համագումարին“, 1930 թ.
հունիսի 27-հուլիսի 2. հայերեն Եջ 773-774։

«Անցյալում մեզ մոտ գործն աշխատեալ էր, վոր մեր ամբողջ ար-
դունաբերության հիմնական աղբյուրն էր Ուկրաինայի ածխա-
մետաղածուլական բաղան։ Ուկրաինայի մետաղ էր հայթայթում
մեր բոլոր արդյունաբերական շրջաններին, ինչպես հարավին,
աշխատեալ Մոսկվային և Լենինգրադին։ Դարձյալ նա յեր, վոր
ածուխ էր հայթայթում ԽՍՀՄ բոլոր հիմնական ձեռնարկություն-
ներին։ Այստեղ յես բացատրում եմ Ուկրալը, վորովհետև նրա տե-
սակարար կշիռը, համեմատած Դոնբասի հետ, անհշտն մեծություն
էր ն երկայացնում։ Դրա համապատասխան մենք ունեյինք ար-
դյունաբերական հրամանատարական կազմ պատրաստելու յերեք
հիմնական ոջախ՝ Հարավը, Մոսկվայի շրջանը, Լենինգրադի շրջանը։
Հասկանալի յես, վոր իրերի այդ պայմաններում մենք կարող ե-
յինք աշխատեալ կամ աշխատեալ բավարարվել ինժեներա-տեխնիկա-
կան այն նվազագույն ուժերով, վոր մեր յերկիրը կարող էր
ունենալ միայն այն ժամանակ։

Այսպես էր մոտիկ անցյալում։
Բայց այժմ գոյություն ունեն միանգամայն տարբեր պայմաններ։
Այժմ յես կարծում եմ պարզ է, վոր պահպանելով զարգացման

ներկայիս տեմպը և արտադրություն վիթխարի մասշտաբը, մենք
արդեն չենք կարող շարժվել միմիայն Ուկրաինայի ածխամետա-
ղածուլական բաղայով։ Դուք գիտեք, վոր Ուկրաինայի ածուխն
ու մետաղն արդեն հերիք չեն մեզ, չնայած դրանց արտադրու-
թյան աճմանը։ Դուք գիտեք, վոր մենք այդ պատճառով հարկա-
դրված ենք ածխամետաղածուլական նոր բաղա ստեղծել Մրե-
վելում և Ուկրալ-Կուզնեցկի ավազանում։ Դուք գիտեք, վոր մենք
հաջողությամբ ենք ստեղծում այդ բաղան։ Սակայն այդ քիչ է։
Մեզ անհրաժեշտ է նաև մետաղածուլություն ստեղծել հենց Սի-
բիրում, նրա աճող պահանջներին բավարարություն տալու հա-
մար։ Մենք արդեն ստեղծում ենք այդ։ Բացի դրանից, մեզ հար-
կավոր է գունավոր մետաղածուլման նոր բաղա ստեղծել Կա-
զակստանում, Թուրքեստանում։ Մեզ անհրաժեշտ է, վերջապես,
զարգացնել յերկաթուղային ամենալայն շինարարություն։ Այդ
թելադրում են ամբողջ ԽՍՀՄ շահերը — ծայրերկրային հանրա-
պետությունների, ինչպես նաև կենտրոնի շահերը։

Բայց դրանից հետևում է, վոր մենք արդեն չենք կարող բավա-
կանաբար արդյունաբերության ինժեներա-տեխնիկական և հրա-
մանատարական ուժերի այն միջնորդումով, վորով մենք յուրա-
յինք գնում առաջ։ Դրանից հետևում է, վոր այժմ բավական չեն
ինժեներա-տեխնիկական ուժերի ձևակերպման հին ոջախները,
վոր անհրաժեշտ է ստեղծել նոր ոջախների մի ամբողջ ցանց Ու-
կրալում, Սիբիրում, Միջին Ասիայում։ Այժմ անհրաժեշտ է, վոր
մենք յեռապատիկ, հնգապատիկ անգամ ավելի ապահովենք
մեզ արդյունաբերական ինժեներա-տեխնիկական և հրամա-
նատարական ուժերով, յեթե մենք իրոք մտադիր ենք իրա-
կանացնել ԽՍՀՄ սոցիալիստական ինդուստրացման ծրագիրը։
Սակայն մեզ պիտք են վոչ ամեն տեսակի հրամանատարա-
կան, ինժեներա-տեխնիկական ուժեր։ Մեզ հարկավոր են հրա-
մանատարական, ինժեներա-տեխնիկական այն պիսի ուժեր,
վորոնք ընդունակ լինեն հասկանալու մեր յերկրի բանվոր դա-
սակարգի քաղաքականությունը, ընդունակ լինեն յուրացնելու
այդ քաղաքականությունը և պատրաստ լինեն սրտանց իրակա-
նացնելու այդ։ Իսկ ի՞նչ է նշանակում այս։ Այս նշանակում է,
վոր մեր յերկիրը թևակոխել է զարգացման աշխարհի մի փուլ,
յերբ բանվոր դասակարգը պետք է ստեղծի սեփա-
կան արտադրական-տեխնիկական ինտելիգենցիա՝

ընդունակ պաշտպանելու նրա շահերն արտադրութեան մեջ, վորպէս տիրապետող դասակարգի շահեր:

Վոչ մի տիրապետող դասակարգ չի բավարարել առանց իր սեփական ինտելիգենցիայի: Վոչ մի հիմք չկա տարակուսելու, վոր ՅՄԸՄ բանվոր դասակարգը նույնպէս չի կարող բավարարել առանց իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի: Խորհրդային իշխանութեանը հաշիւի առաջ այս հանգամանքը և բանվոր դասակարգից դուրս յեկած մարդկանց առաջ բացեց ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերի բարձրագույն ուսումնական հաստատութիւնները: Դուք գիտեք, վոր տասնյակ հազարավոր բանվոր ու գյուղացի յերիտասարդներ սովորում են այժմ բարձրագույն ուսումնական հաստատութիւններում: Յեթե առաջ, կապիտալիզմի ժամանակ, բարձրագույն ուսումնական հաստատութիւնները բարենի զավակների մեծաշնորհն էին, ապա այժմ, խորհրդային կարգերում, բանվոր և գյուղացի յերիտասարդներն այնտեղ կազմում են տիրապետող ուժը: Տարակույս չկա, վոր շուտով մենք ուսումնական հաստատութիւններից կստանանք մեր արդյունաբերութեան հազարավոր նոր հրամանատարներ—հազարավոր տեխնիկներ և ինժեներներ:

Սակայն դա գործի մի կողմն է միայն: Գործի մյուս կողմն այն է, վոր բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան պետք է ձևակերպի վոչ միայն բարձրագույն դպրոցն անցած մարդկանցից, այլ հավաքագրելու յե նաև մեր ձեռնարկութիւնների գործնական աշխատողներից, վորակալ բանվորներից, գործարանում, հանքահորում բանվոր դասակարգի ունեցած կուլտուրական ուժերից: Մրցութեան նախաձեռնողները, հարվածային բրիգադների ղեկավարները, աշխատանքային խանդավառութեան պրակտիկ ներշնչողները, շինարարութեան այս կամ այն բնագավառում աշխատանքը կազմակերպողները,—ահա բանվոր դասակարգի այն նոր խավը, վորը և բարձրագույն դպրոցն անցած ընկերների հետ միասին պետք է կազմի բանվոր դասակարգի ինտելիգենցիայի կորիզը, մեր արդյունաբերութեան հրամանատարական կազմի կորիզը: Խնդիրն այն է, վոր ներին, ավելի համարձակորեն առաջ քաշել նրանց հրամանատարական պաշտոնների, հնարավորութեան տալ նրանց հայտարարելու իրենց կազմակերպչական ընդունակութիւնները, հնարա-

վորութեան տալ նրանց լրացնելու իրենց գիտելիքները և համապատասխան պայմաններ ստեղծել նրանց համար՝ առանց փող խնայելու:

Այդ ընկերների մեջ քիչ չեն նաև անկուսակցականները: Սակայն դա չի կարող արգելք ծառայել նրանց ղեկավար պաշտոնների համար առաջ քաշելու: Ընդհակառակը, հատկապէս նրանց, այդ անկուսակցական ընկերներին, հարկավոր է շրջապատել հատուկ հոգացութեամբ, հարկավոր է առաջ քաշել հրամանատարական պաշտոնների համար, վորպէսզի նրանք իրոք համոզվեն, թե կուսակցութեանը գիտե գնահատել ընդունակ և տաղանդավոր աշխատողներին:

Մի քանի ընկերներ կարծում են, վոր գործարաններում ղեկավար պաշտոնների համար կարելի չե առաջ քաշել միմիայն կուսակցական ընկերներին: Այդ հիման վրա նրանք հաճախ մի կողմ են հրում ընդունակ և նախաձեռնող անկուսակցական ընկերներին, առաջին տեղն առաջ քաշելով թեկուզ ավելի քիչ ընդունակ և վոչ նախաձեռնող կուսակցականներին: Ավելորդ է ասել, վոր չկա ավելի հիմար, ավելի ռեակցիոն, թույլ տվեք ասել՝ «քաղաքականութեան»: Հաղիվ թե հարկ լինի ապացուցելու, վոր այդպիսի «քաղաքականութեամբ» կարելի չե միայն վարկաբեկել կուսակցութեանը, մի կողմ հրել անկուսակցական բանվորներին կուսակցութեանից: Մեր քաղաքականութեանը բոլորովին այն չե, վոր կուսակցութեանը վերածենք ինքնամիոյի կաստայի: Մեր քաղաքականութեանն այն է, վոր կուսակցական և անկուսակցական բանվորների մեջ գոյութեան ունենա «փոխադարձ վստահութեան» մթնոլորտ, «փոխադարձ ստուգման» մթնոլորտ (Լենին): Մեր կուսակցութեանը բանվոր դասակարգի մեջ ուժեղ է իմիջի այլոց այն պատճառով, վոր նա հենց այդպիսի քաղաքականութեան է վարում:

Այսպէս ուրեմն, ջանալ, վոր ՅՄԸՄ բանվոր դասակարգն ունենա իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան, այդ է խնդիրը:

Այսպէս է դրված մեր արդյունաբերութեան զարգացման չորրորդ նոր պայմանի հարցը»:

„ՆԱՐ պայմաններ, սեփական օրնարարութեան գործիքներ“, էջ 9-11. 1931 թ. հունվարի 23-ի հառք, հայերէն էջ 11-14:

«Հարցն այլ կերպ է դրվում նաև հին բուրժուական արտադրա-
կան-տեխնիկական ինտելիգենցիայի վերաբերմամբ:
Յերկու տարի առաջ գործն այնպես եր, վոր հին տեխնիկական
ինտելիգենցիայի ամենից ավելի վորակյալ մասը վարակված եր
ֆասարարության հիվանդությամբ: Դեռ ավելին՝ ֆասարարու-
թյունն այն ժամանակ մի տեսակ մոդա յեր: Վոմանք ֆասում
եյին, մյուսները թագցնում եյին ֆասարարներին, յերրորդներն
եյլվանում եյին իրենց ձեռքը և չեզոքություն պահպանում, չոր-
րորդներն եյ տատանվում եյին ֆասարարների ու խորհրդային
իշխանության միջև, շարունակելով աշխատել քիչ թե շատ լոյալ:
Սակայն այստեղ խոսքը վերաբերում է վոչ թե մեծամասնու-
թյանը, այլ տեխնիկական ինտելիգենցիայի ամենալուրակյալ
մասին:

Ինչից ստեղծվեց ֆասարարական շարժումը: Ի՞նչն եր մնունդ
տալիս նրան: Դասակարգային պայքարի սրումը ԽՍՀՄ-ում,
խորհրդային իշխանության հարձակողական քաղաքականու-
թյունը քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերի վերա-
բերմամբ, այդ վերջինների դիմադրությունը խորհրդային իշխա-
նության քաղաքականությանը, միջազգային դրության բար-
դությունը, կոլտնտեսական և խորհրտնտեսական շինարարության
դժվարությունները: Յեթե ֆասարարների մարտական մասի ակ-
տիվությունն ամրանում եր կապիտալիստական յերկրների իմ-
պերիալիստների ինտերվենցիոնիստական դավերով, յերկրի հա-
ցանատիկային դժվարություններով, ապա տեխնիկական ինտե-
լիգենցիայի մյուս մասի տատանումները դեպի ակտիվ ֆասա-
րարներն ուժեղանում եյին տրոցկիստական, մենշևիկյան շատա-
խոսների մոդայական դատարկախոսությամբ, թե «կոլտնտեսու-
թյուններից և խորհրտնտեսություններից, միևնույն է, բան չի
դուրս գա», թե «խորհրդային իշխանությունը, միևնույն է,
այլասերվում է և մոտ ժամանակում պետք է կործանվի», թե
«բայլեկիներն իրենց քաղաքականությամբ իրենք նպաստում
են ինտերվենցիային» և այլն և այլն: Բացի դրանից, յեթե նույ-
նիսկ հին բայլեկիներից վոմանք, աջ ուկրոնիստների թվից,
չկարողացան կանգնել «քամու» դեմ և այդ շրջանում տատան-
վեցին կուսակցությունից դեպի մյուս կողմը, ապա հիմք չկա
զարմանալու, վոր հին տեխնիկական ինտելիգենցիայի վորոշ

մասը, վորը յերբեք բայլեկիզմի հոտ էլ չեր առել, նույնպես
աստծու ոգնությամբ տատանվեց:

Հասկանալի չե, վոր էրերի այդ դրության ժամանակ խորհրդա-
յին իշխանությունը կարող եր միմիայն մի քաղաքականություն
վարել հին տեխնիկական ինտելիգենցիայի նկատմամբ՝ ակտիվ
ֆասարարներին ջախջախելու, չեզոքներին շերտավորե-
լու և լոյալներին ներգրավելու քաղաքականություն:
Այդպես եր մի-յերկու տարի առաջ»:

„Նոր պայմաններ - անստակացի օրհրդարության
գործընթացներ“, էջ 11. 1931 թ. հուլիսի 23-ի հատր. հայերեն էջ 14-15

Նոր պայմանները պետք է ստեղծեյին և իրոք ստեղծեցին նոր
տրամադրություններ հին տեխնիկական ինտելիգենցիայի մեջ:
Իսկապես դրանով է բացատրվում այն փաստը, վոր առաջ ֆա-
սարարներին համակրող այդ ինտելիգենցիայի վորոշ մասի խոր-
հրդային իշխանության կողմը դառնալու վորոշ նշաններ ունենք:
Այն փաստը, վոր վոչ միայն հին ինտելիգենցիայի այդ խավը,
այլև յերեկվա վորոշակի ֆասարարները, յերեկվա ֆասարար-
ների ղգալի մասը բանվոր դասակարգի հետ միասին սկսել է աշ-
խատել մի շարք գործարաններում և ֆաբրիկաներում, այդ փաստն
խառել մի շարք գործարաններում և ֆաբրիկաներում, այդ փաստն
անտարակույս վկայում է, վոր հին տեխնիկական ինտելիգեն-
ցիայի շարքերում շրջադարձն արդեն սկսվել է: Հարկավ, այդ չի
նշանակում, վոր մեզնում այլևս ֆասարար չկա: Վնասարարներ
կան և կլինեն, քանի մենք դասակարգեր ունենք, քանի կա կա-
պիտալիստական շրջապատ: Սակայն այդ նշանակում է, թե քանի
վոր առաջ ֆասարարներին այնպես կամ այնպես համակրող հին
տեխնիկական ինտելիգենցիայի ղգալի մասն այժմ շրջադարձ է
կատարել դեպի խորհրդային իշխանությունը, — քիչ են մնացել
կատարել ֆասարարներ, նրանք մեկուսացված են և նրանք միառ-
ժամանակ ստիպված կլինեն թագնվել խորը ընդհատակում:
Բայց սրանից հետևում է, վոր դրան համապատասխան պետք
է փոխվի մեր քաղաքականությունը հին տեխնիկական ինտելի-
գենցիայի վերաբերմամբ: Յեթե ֆասարարական յեռու շրջա-
նում մեր վերաբերմունքը դեպի հին տեխնիկական ինտելիգեն-
ցիան արտահայտվում եր գլխավորապես ջախջախման քաղաքա-
կանությամբ, ապա այժմ, այդ ինտելիգենցիայի դեպի խորհրդա-
յին իշխանությունը կատարած շրջադարձի շրջանում, մեր վե-

լաբերմունքը դեպի նա պետք է արտահայտվի գլխավորապես ներգրավելու և նրա մասին հոգ տանելու քաղաքականությունը: Սխալ և վոչ դերակատիկական կլիներ շարունակել հին քաղաքականությունը փոխված նոր պայմաններում: Հիմարություն և անխելքություն կլիներ այժմ հին դպրոցի պատկանող գրեթե ամեն մի մասնագետի և ինժեների վրա նայել վորպես չբուխված հանցագործի և ֆուսսարարի: «Սպեցակերությունը» մեզ մոտ միշտ համարվել է և ֆուսս և ֆուսսակար և ամոթավոր յերևույթ: Ուրեմն, փոխել վերաբերմունքը դեպի հին դպրոցի ինժեներա-տեխնիկական ուժերը, ցույց տալ նրանց հանդեպ ավելի ուշադրություն և հոգա-տարություն, ավելի համարձակ ներգրավել նրանց աշխատանքի — այս է խնդիրը: Այսպես է դրված մեր արդյունաբերության զարգացման հինգերորդ նոր պայմանի հարցը»:

„ՆՈՐ ԱՅՈՒՆՈՒՄՆԵՐ — ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՄԻՆ
ՈՐ ԽՈՒՐՈՒՄՆԵՐ“, Էջ 12-13, 1931 թ. հունիսի 23-ի հառք. հայերեն
Էջ 15-16:

«ԽՍՀՄ-ում հակահեղափոխական բուրժուազիային՝ խորհրդային իշխանություն դեմ բացարձակ յերույթներ փորձելու տակտիկա-կան գեղքն հիմնված: Այդ գեղքը նրան տվին 1927 թվի նոյեմբերի 7-ին Մոսկվայում և Լենինգրադում հակախորհրդային դեմոնստրացիա կազմակերպելու փորձ անող տրոցկիստները: Փաստ է, վոր տրոցկիստների հակախորհրդային յերույթները բարձրաց-րին բուրժուազիայի վոգին և հնարավորություն տվին բուրժուա-կական մասնագետների ֆուսսարարական աշխատանքին»:

„ԲԱՅԼՈՇՎԻԳՄԻ ԱՍՏՄՈՒՄՆԵՐԻ ՄԻՖԱՆԻ ԿԱՐԳԵՐԻ
ՄԱՍԻ“, Գ. Գառնի „Պոլիտառկայա ռեվոլյուցիա“ ամսագրի խմբագրու-
թյանը. „Բայշոշվիկ“ 1931 թ. № 19-20, հոկտեմբերի 31-ը, Էջ 17:

5.

ՏԵԽՆԻԿԱՆ ՅԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

«... մենք տասնյակ հազարավոր տրակտորներ և գյուղատնտե-սական մեքենաներ հայթայթեցինք գյուղին, ջախջախեցինք կու-լակին, կազմակերպեցինք կոլտնտեսություններ, գյուղացիներին հնարավորություն տվինք մարդավայել ապրելու և աշխատելու: Այժմ գյուղին այլևս խորթ մայր անվանել չի կարելի գյուղացու համար: Յեվ վորովհետև գյուղին այլևս խորթ մայր անվանել չի կարելի, գյուղացին սկսեց նստել գյուղում, և այլևս մեզ մոտ չկա վոչ «մոլոժիկի փախուստ գյուղից քաղաք», վոչ էլ բանվորական ուժի ինքնահոս:

Դուք տեսնում եք, վոր ներկայումս ստեղծվել է միանգամայն նոր կացություն և ձեռնարկությունները բանվորական ուժով ապահովվելու նոր պայմանները»:

„ՆՈՐ ԱՅՈՒՆՈՒՄՆԵՐ — ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՄԻՆ
ՈՐ ԽՈՒՐՈՒՄՆԵՐ“, Էջ 3, 1931 թ. հունիսի 23-ի հառք, հայերեն Էջ 4:

«Յերկրորդ, դրանից բխում է այն, վոր անհրաժեշտ է անհապաղ անցնել աշխատանքի ամենաձանր պրոցեսների մեքենայաց-մանը, ամբողջ թափով զարգացնելով այդ գործը (անտառային արդյունաբերությունը, շինարարական գործը, ածխարդյունաբե-րությունը, բեռնում-պարպումը, տրանսպորտը, սև մետաղաձու-լումը և այլն): Իհարկե, այդ չի նշանակում, թե պետք է թողնել ձեռքի աշխատանքը: Ընդհակառակը, ձեռքի աշխատանքը դեռ յերկար ժամանակ ամենալուրջ դեր է խաղալու արտադրության մեջ: Սակայն այդ նշանակում է, վոր աշխատանքի պրոցեսների մեքենայացումը մեզ համար այն նոր վճռական ուժն է, առանց վորի հնարավոր չի պահպանել վոչ մեր տեմպը և վոչ էլ արտա-դրության նոր մասշտաբը:

Մեզ մոտ դեռ քիչ են այնպիսի տնտեսավարներ, վորոնք «չեն

հավատում» վոչ մեք ենալացմանը, վոչ ել պայմանագրերին՝ կոլ-
տնտեսություններին հետ»:

„ՆՈՐ ԱՄԱՅԺԱՆՆԵՐ--ՏՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՄԻ ԱՆ
ՈՐ ԽՈՂԻՐՆԵՐ“, Էջ 3, 1931 թ. հունիսի 23-ի գառը. հայերեն Էջ 4-5:

«Այսպես ուրեմն, կազմակերպված ձևով հավաքել բան-
վորական ուժը կոլտնտեսություններին հետ կընք-
ված պայմանագրերի միջոցով, մեք ենալացնել
աշխատանքը—այս է խնդիրը:

Այսպես է դրված մեր արդյունաբերության զարգացման առաջին
նոր պայմանի հարցը»:

„ՆՈՐ ԱՄԱՅԺԱՆՆԵՐ--ՏՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՄԻ ԱՆ
ՈՐ ԽՈՂԻՐՆԵՐ“, Էջ 4, 1931 թ. հունիսի 23-ի գառը. հայերեն Էջ 5:

«Հազիվ թե կարիք կա ապացուցելու, վոր առանց բանվորների
մշտական կազմի, վորոնք քիչ թե շատ յուրացրել են արտադրու-
թյան տեխնիկան, վարժվել են նոր մեխանիզմին, հնարավոր չե
առաջ շարժվել, հնարավոր չե արտադրական պլանները կատարել:
Հակառակ դեպքում հարկավոր կլինեին ամեն անգամ նորից սովոր-
եցնել բանվորներին, ժամանակի կեսը վատնել նրանց սովոր-
եցնելու վրա, փոխանակ արտադրության համար ոգտադոր-
ծելու»:

„ՆՈՐ ԱՄԱՅԺԱՆՆԵՐ--ՏՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒՄԻ ԱՆ
ՈՐ ԽՈՂԻՐՆԵՐ“, Էջ 4, 1931 թ. հունիսի 23-ի գառը. հայերեն Էջ 5:

«Անցյալում, արդյունաբերության վերականգնման ժամանակա-
շրջանում, յերբ մեր տեխնիկական սարքավորումը բարդ չեր,
խսկ արտադրության մասշտաբը փոքր, կարելի չեր մի կերպ «հան-
դուրժել» բանվորական ուժի այսպես կոչված հոսունությունը:
Այժմ այլ բան է: Այժմ դրությունն արմատապես փոխվել է:
Այժմ, ծավալուն վերակառուցման ժամանակաշրջանում, յերբ ար-
տադրությունը հասել է վիթխարի մասշտաբի, խսկ մեխանիկա-
կան սարքավորումը դարձել է վերին աստիճանի բարդ, բանվո-
րական ուժի հոսունությունը մեր արտադրության համար դար-
ձել է մի չարիք, վոր կազմալուծում է մեր ձեռնարկություն-
ները: Այժմ «հանդուրժել» բանվորական ուժի հոսունությունը,
նշանակում է քայքայել մեր արդյունաբերությունը, վոչըն-

չացնել արտադրական պլանների կատարման հնարավորու-
թյունը, վերացնել արտադրանքի վորակը բարելավելու հնարա-
վորությունը:

Վերադառնալով թանկորակի ուժի հոսունության պատ-
ճառը:

Աշխատանքի սխալ կազմակերպման մեջ,

սխալ տարիֆային սխտեմի մեջ,

աշխատավարձի «ձախ» հավասարեցման մեջ:

Մի շարք ձեռնարկություններում աշխատավարձի դրույքները
սահմանված են այնպես, վոր վորակյալ և անվորակ աշխատանքի
միջև, ծանր ու թեթև աշխատանքի միջև տարբերությունը հա-
մարյա ջնջվում է: Հավասարեցումը տանում է դեպի այն, վոր
վոչ-վորակյալ բանվորը չի շահագրգռված վորակյալների կարգն
անցնելու և այդպիսով դուրի է առաջ ընթանալու հեռանկար-
ներից, ուստի նա իրեն «ամառանոցավոր» է դգում արտադրու-
թյան մեջ, աշխատում է ժամանակավոր նրա համար միայն,
վոր մի քիչ «փող աշխատի» և ապա գնա՝ մի այլ տեղ
«բախտ վորոնելու»: Հավասարեցումը տանում է դեպի այն,
վոր վորակյալ բանվորը հարկադրված է ձեռնարկությունից-
ձեռնարկություն անցնել, վորպեսզի վերջապես գտնի այն ձեռ-
նարկությունը, վորտեղ կարող են ըստ արժանվույն գնահատել
վորակյալ աշխատանքը: Դրանից է առաջանում ձեռնարկություն-
ներից-ձեռնարկություն «ընդհանուր» շարժումը, բանվորական ուժի
հոսունությունը:

Այդ շարիքը վոչնչացնելու համար պետք է վերացնել հավասա-
րեցումը և փոխել տարիֆային սխտեմը: Այդ չարիքը վոչնչաց-
նելու համար պետք է կազմակերպել դրույքների այնպիսի սխ-
տեմ, վոր նկատի առնել վորակյալ և վոչ-վորակյալ աշխատան-
քի, ծանր և թեթև աշխատանքի տարբերությունը: Չի կարելի
հանդուրժել, վոր սև մետաղագործության ասպարեզում գլանող
բանվորն ստանա նույնքան, վորքան ավելողը: Չի կարելի հան-
դուրժել, վոր յերկաթուղային տրանսպորտի մեքենավարն
ստանա նույնքան, վորքան արտագրողը: Մարքսը և Լենինն
ասում են, վոր վորակյալ աշխատանքի և վոչ-վորակյալ աշխա-
տանքի միջև տարբերությունը գոյություն կունենա նույնիսկ
սոցիալիզմի ժամանակ, նույնիսկ դասակարգերի վոչնչացվելուց
հետո, վոր միայն կոմունիզմի ժամանակ պետք է անհետանա այդ

տարբերությունը, ուստի նույնիսկ սոցիալիզմի ժամանակ «աշխատավարձը» պետք է տրվի ըստ աշխատանքի և վոչ թե ըստ պահանջի: Սակայն մեր տնտեսավարական և արհմիութենական հավասարաբնեւը համաձայն չեն դրան և նրանք յենթադրում են, վոր մեր խորհրդային կարգերում այդ տարբերությունն արդեն վերացել է: Ո՞վ է իրավացի, Մարքսն ու Լենինը, թե՞ հավասարաբնեւը: Պետք է ընդունել, վոր այստեղ Մարքսն ու Լենինն են ճիշտը: Բայց սրանից պետք և յենթադրել, վոր այժմ ով դրույքային սխառմը հիմնում է հավասարեցման «սկզբունքները» վրա, առանց հաշվի առնելու վորակյալ աշխատանքի և վոչ-վորակյալ աշխատանքի տարբերությունը, խղում է իր կապը մարքսիզմից, խղում է իր կապը լենինիզմից:

Արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղում, յուրաքանչյուր ձեռնարկության մեջ, յուրաքանչյուր ցեխում կան քիչ թե շատ վորակյալ բանվորների առաջատար խմբակներ, վորոնց նախ և առաջ ու գլխավորապես պետք է ամրացնել արտադրությանը, յեթե մենք ուզում ենք իրոք ապահովել բանվորների մշտական կազմը ձեռնարկության մեջ: Նրանք, բանվորների այդ առաջատար խմբակները, կազմում են արտադրության հիմնական ողակը: Ամրացնել նրանց ձեռնարկությանը, ցեխին, նշանակում է ամրացնել բանվորների ամբողջ կազմը, արմատից պոկել բանուժի հոսունությունը: Իսկ ի՞նչպես ամրացնել նրանց ձեռնարկությանը: Նրանց կարելի չէ ամրացնել միմիայն առաջ քաշելով դեպի վեր, բարձրացնելով նրանց աշխատավարձի մակարդակը, կազմակերպելով աշխատավարձն այնպես, վոր արժանի գնահատություն է տալիս աշխատողի վորակին: Իսկ ի՞նչ է նշանակում առաջ քաշել դեպի վեր և բարձրացնել նրանց աշխատավարձի մակարդակը: Դա, բացի մյուս բոլորից, նշանակում է հեռանկար բանալ վոչ-վորակյալ բանվորների համար, խթանել նրանց դեպի վեր ընթանալու համար, վորակյալների կարգն անցնելու համար: Դուք ինքներդ գիտեք, վոր այժմ մեզ անհրաժեշտ են միլիոնավոր վորակյալ բանվորներ: Սակայն վորակյալ բանվորներ ստեղծելու համար պետք է մղում տալ, հեռանկար տալ չվարժված բանվորներին՝ առաջ գնալու, դեպի վեր ընթանալու: Յեւ վորքան ավելի համարձակ վոտք դնենք մենք այդ ուղին, այնքան ավելի լավ, վորովհետեւ այդ է բանվորական ուժի հոսունությունը վերացնելու հիմնական միջոցը: Իսկ խնայողություն անել այդ

գործում, նշանակում է վորագործություն կատարել, գնալ մեր սոցիալիստական ինդուստրիայի շահերի դեմ:

Սակայն այդ դեռ բոլորը չէ:

Բանվորներին ձեռնարկությանն ամրացնելու համար անհրաժեշտ է ել ավելի բարելավել բանվորների մատակարարումը և բնակարանային պայմանները»:

„Ն ո Ր Ա Յ Ա Մ Ա Ն Ա Ն Ե Ր -- Տ Ա Տ Ե Ս Ա Կ Ա Ն Օ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Յ Ա Ն Ա Ր Խ Ա Ն Պ Ե Ր Ե Ր“ . Էջ 4-6. 1931 թ. հուլիսի 23-ի նաոք. հայերեն Էջ 5-7:

«Ի՞նչ է դիմադրկությունը: Դիմադրկությունը հանձնված աշխատանքի համար վորեւ պատասխանատվության բացակայությունն է, մեքենաների, դադգյահների, գործիքների համար պատասխանատվության բացակայությունն է: Հասկանալի չէ, վոր դիմադրկության ժամանակ խոսք ել չի կարող լինել աշխատանքի արտադրողականությունը լրջորեն բարձրացնելու, արտադրանքի վորակը բարելավելու, մեքենաներին, դադգյահներին, գործիքներին խնամքով վերաբերվելու մասին: Դուք գիտեք, թե ինչ բանի հասցրեց դիմադրկությունը յերկաթուղային տրանսպորտում: Նա նույնպիսի արդյունք է տալիս նաեւ արդյունաբերության մեջ: Մենք յերկաթուղային տրանսպորտում վոչնչացրինք դիմադրկությունը և բարձրացրինք վերջինիս աշխատանքը: Մենք նույնը պետք է անենք արդյունաբերության մեջ, նրա համար, վորպեսզի վերջինիս աշխատանքն ավելի բարձր աստիճանի հասցվի»:

„Ն ո Ր Ա Յ Ա Մ Ա Ն Ա Ն Ե Ր -- Տ Ա Տ Ե Ս Ա Կ Ա Ն Օ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Յ Ա Ն Ա Ր Խ Ա Ն Պ Ե Ր Ե Ր“ . Էջ 7. 1931 թ. հուլիսի 23-ի նաոք. հայերեն Էջ 9:

«Ի՞նչպես կարող եր դիմադրկությունն արմատանալ մեզ մոտ մի շարք ձեռնարկություններում: Նա ձեռնարկություն մտալ վորպես անընդհատ ապուրինի ուղեկիցը: Սխալ կլինեւր ասել, թե անընդհատ աշխատանքն անպայմանորեն իր հետ բերում է դիմադրկություն արդյունաբերության մեջ: Աշխատանքը ճիշտ կազմակերպելիս, յուրաքանչյուրի պատասխանատվությունը վորոշ աշխատանքի համար կազմակերպելիս, բանվորների վորոշ խմբեր մեխանիզմներին, դադգյահներին ամրացնելիս, հերթափոխությունը ճիշտ կազմակերպելիս, այնպես, վոր հերթերն իրենց վորակով և կվալիֆիկացիայով չզրկեն իրար — այս պայմաններում անընդ-

հատ աշխատանքը կտանի դեպի աշխատանքի արտադրողականության հսկա աճում, աշխատանքի վորակի լավացում, դիմազրկության վոնչնացում: Այսպես ե, որինակ, գործը յերկաթուղային տրանսպորտում, վորտեղ այժմ գոյություն ունի անընդհատը, սակայն վորտեղ դիմադրկություն չկա այլևս: Կարելի՞ յե արդյոք ասել, վոր արդյունաբերական ձեռնարկություններում մենք նույնպիսի նպաստավոր պատկեր ունենք անընդհատի վերաբերմամբ: Դժբախտաբար այդ չի կարելի ասել: Բանն այն ե, վոր մեզ մոտ, մի շարք ձեռնարկություններ անընդհատի անցան չափազանց հապճեպ, առանց համապատասխան պայմաններ նախապատրաստելու, առանց պատշաճ չափով, քիչ թե շատ համարժեք վորակով հերթափոխություններ կազմակերպելու, առանց կազմակերպելու յուրաքանչյուրի պատասխանատվությունը՝ տվյալ կոնկրետ աշխատանքի համար: Իսկ դա այն բանին հասցրեց, վոր տարերքի կամքին թողնված անընդհատը վերածվեց դիմադրկության: Ըստ վորում մի շարք ձեռնարկություններում մենք ունենք թղթով ու խոսքով անընդհատ ե վոչ թղթե, այլ իրական դիմադրկություն: Ըստ վորում աշխատանքի պատասխանատվության զգացմունքի բացակայություն, անխնամ վերաբերմունք դեպի մեքենաները, դադգյանների մասսայական կտրատում ե աշխատանքի արտադրողականության ազդակի բացակայություն: Զուր չե, վոր բանվորներն ասում են. «մենք աշխատանքի արտադրողականությունը կբարձրացնեյինք, գործը կբարելավեյինք, սակայն մի կգնահատի մեզ, յերբ վոչ վոք վոչ մի բանի համար պատասխանատու չե»:

„ՆՈՐ ԱՄՅԱՄԱՆՆԵՐ -- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՒՍԱՐԱՐՈՒՄՅԱՆ
ԳՈՐԽԱՆԻՐՆԵՐ“, Էջ 7, 1931 թ. հուլիսի 23-ի հառք. հայերեն էջ 9-10:

«Այդպես ուրեմն.

ա) Այսպիսով պարզ ե, վոր այլևս չի կարելի հույսը դնել առաջվա նման բանվորական ուժի ինքնահոսի վրա: Արդյունաբերությունը բանվորական ուժով ապահովելու համար այժմ պետք ե այն հավաքագրել կազմակերպված ձևով, պետք ե մեքենայացնել աշխատանքը: Կարծել, թե կարելի յե գործն առաջ տանել առանց մեքենայացման՝ աշխատանքի մեր ներկա տեմպի ե արտադրության մասշտաբի պայմաններում, նշանակում ե հույս ունենալ, վոր կարելի յե գլխով դատարկել ծովը:

բ) Ապա պարզ ե, վոր այլևս չի կարելի հանդուրժել արդյունաբերության մեջ բանվորական ուժի հոսունությունը: Այդ չափից ազատվելու համար պետք ե նոր ձևով կազմակերպել աշխատավարձը ե քիչ թե շատ մշտական դարձնել բանվորների կազմը ձեռնարկություններում:

գ) Ապա պարզ ե, վոր չի կարելի այլևս հանդուրժել դիմադրկությունն արտադրության մեջ: Այդ չարիքից ազատվելու համար պետք ե նոր ձևով կազմակերպել աշխատանքը, պետք ե ուժերը դասավորել այնպես, վոր բանվորների յուրաքանչյուր խումբը պատասխանատու լինի մեքենաների ու դադգյանների աշխատանքի համար, աշխատանքի վորակի համար:

դ) Ապա պարզ ե, վոր հնարավոր չե այլևս առաջվա նման գործը տանել ինժեներատեխնիկական այն նվազագույն հին ուժերով, վոր ժառանգել եյինք մենք բուրժուական Ռուսաստանից: Արտադրության ներկա տեմպը ե մասշտաբը բարձրացնելու համար պետք ե պայմաններ ստեղծել, վորպեսզի բանվոր դասակարգն ունենա իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան:

յե) Ապա պարզ ե, վոր չի կարելի առաջվա նման միևնույն չափանիշով մոտենալ հին դպրոցի բոլոր մասնագետներին ե ինժեներատեխնիկական ուժերին: Հաշվի առնելով փոխված պայմանները՝ պետք ե փոխել մեր քաղաքականությունը ե առավելազույն հոգատարություն ցուցաբերել այն մասնագետների ե ինժեներատեխնիկական ուժերի նկատմամբ, վորոնք վորոշակի դարձնում են իրենց յերեսը դեպի բանվոր դասակարգը:

զ) Վերջապես պարզ ե, վոր չի կարելի առաջվա նման գործը տանել կուտակման հին աղբյուրներով: Արդյունաբերության ե գյուղատնտեսության հետագա ծավալումն ապահովելու համար պետք ե հասնել այն բանին, վորպիսով պայմաններ ստեղծել կուտակման նոր աղբյուրներ գործի դնելու, անտեսնալարությունը վերացնելու, տնտեսական հաշվարկն արմատացնելու, ինքնարժեքն իջեցնելու ե արդյունաբերության ներքին կուտակումներն ավելացնելու համար: Սրանք են արդյունաբերության դարգացման այն նոր պայմանները, վորոնք պահանջում են աշխատանքի նոր ձևեր, տնտեսական շինարարության ղեկավարման նոր ձևեր»:

„ՆՈՐ ԱՄՅԱՄԱՆՆԵՐ -- ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՒՍԱՐԱՐՈՒՄՅԱՆ
ԳՈՐԽԱՆԻՐՆԵՐ“, Էջ 14-15, 1931 թ. հուլիսի 23-ի հառք. հայերեն էջ 18-19:

«... ինդուստրացումն առաջ մղելու համար անհրաժեշտ է մեր գործարանների հին սարքավորումը փոխել նորով և նոր գործարաններ կառուցել: Մեր արդյունաբերությունը զարգացման այն ժամանակաշրջանը, վորը մենք այժմ ապրում ենք, բնութագրվում է նրանով, վոր մենք արդեն ծանրաբեռնել ենք ցարական ժամանակաշրջանի կապիտալիստներից մեզ թողած հին գործարաններն ու ֆաբրիկաները, ծանրաբեռնել ենք ամբողջությամբ, և այժմ առաջ շարժվելու համար անհրաժեշտ է բարելավել տեխնիկան, անհրաժեշտ է վերասարքավորել հին գործարանները, կառուցել նորերը: Առանց զբաղման անհնար է առաջ շարժվել»:

„ԽՈՐՀԻՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՅԱՆ ՏՈՒՆԱԿԱՆ ՊՐԱՐՅԱՆ ԱՄԱՍԻՆ“, Էջ 8, 1926 թվի ապրիլի 13-ի գեկուցումը:

«Այսուհետև ել չի կարելի հանդուրժել ձեղքերը ռացիոնալացման ասպարեզում, ինքնարժեքի իջեցման պլանը չկատարելը և մեր մի շարք ձեռնարկությունների արտադրանքի խայտառակ վորակը»:

„ԼԵՆԻՆԻ ՊԵՐԻՍՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ԲԱՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ“, 1930 թ. հունիսի 27-հունիսի 2-ը, հայերեն Էջ 778:

«Մենք ամենից համակենտրոնացած արդյունաբերություն ունեցող յերկիրն ենք: Այդ նշանակում է, վոր մենք կարող ենք մեր արդյունաբերությունը հիմնել ամենալավ տեխնիկայի վրա և դրա շնորհիվ ապահովել աշխատանքի չտեսնված արտադրողականություն, կուտակման չտեսնված տեսակը»:

„ՏՈՒՆԱԿԱՆ ԱՐԴԱՐՅԱՆ ԽԱՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ“, Էջ 7-8, 1931 թ. փետրվարի 4-ի հոգը, հայերեն Էջ 8:

1) Այս թեմայի նյութի նշանակալից մասը, կոնստրուկտիվ կապակցությամբ, մտել է նախորդ բաժինները:

«Այժմ մենք թևակոխել ենք նեպի յերկրորդ շրջանը: Մեր տնտեսությունը վիճակի ամենալավը և ամենաբնորոշն այն է, վոր ծանրության կենտրոնը հիմա տեղափոխվել է ինդուստրիայի կողմը: Յեթե այն ժամանակ, նոր տնտեսական քաղաքականությունն առաջին շրջանում, մենք պետք է վոր սկսեյինք գյուղատնտեսությունից, վորովհետև ժողովրդական ամբողջ տնտեսության զարգացումը հենվում էր գյուղատնտեսության վրա, ապա այժմ, շարունակելու համար մեր տնտեսության սոցիալիստական փունդամենտի կառուցումը, տնտեսությունն ամբողջությամբ վերցրած առաջ շարժելու համար, անհրաժեշտ է ուղղորդությունը հատկապես կենտրոնացնել ինդուստրիայի վրա: Այժմ գյուղատնտեսությունն ինքը չի կարող առաջ շարժվել, յեթե ժամանակին չհասցնես գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, արդյունաբերության արտադրանքներ և այլն: Դրա համար ել, յեթե այն ժամանակ, նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում, ժողովրդական ամբողջ տնտեսության զարգացման գործը հենվում էր գյուղատնտեսության վրա, ապա այժմ նա հենվում է և արդեն հենվել է ինդուստրիայի ուղղակի ծավալման վրա»:

„ԽՈՐՀԻՐԱՅԻՆ ԱՐԴԱՐՅԱՆ ՏՈՒՆԱԿԱՆ ՊՐԱՐՅԱՆ ԱՄԱՍԻՆ“, Էջ 5, 1926 թ. ապրիլի 13-ի գեկուցումը:

«... արդյունաբերության զարգացումը, գյուղատնտեսական մեքենաների և տրակտորների արտադրությունը, գյուղացիության մասսայական մատակարարումն արդյունաբերության արտադրանքներով—

հանդիսանում է այն նախադրյալը, առանց մորի հնարավոր չէ առաջ շարժել գյուղատնտեսությունը»:

„ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԻՈՒՔՅԱՆ ՏՏԵՍԱԿԱՆ ԳՐԱՆՔՅԱՆ“
մ ա ս ի ն“, Եջ 24. 1926 թ. ապրիլի 13-ի զեկուցումը:

«Ամենից առաջ, անհրաժեշտ է ուղղմական կոմունիզմի մնացորդների լիկվիդացիան գյուղում»:

Ապա, անհրաժեշտ է ֆաբրիկատների և գյուղատնտեսական արտադրանքի գների ձևից քաղաքականություն, վորն ապահովի արդյունաբերություն և գյուղատնտեսություն արագ աճումն ու «մկրատի» լիկվիդացիան:

Բացի դրանից, անհրաժեշտ է գյուղատնտեսական տուրքի ընդհանուր գումարի կրճատումը և նրա աստիճանական փոխանցումն ընդհանուր պետական բյուջեյի ռեյսերից տեղական բյուջեյի ռեյսերին:

Անհրաժեշտ է գյուղացիության միլիոնավոր մասսաների կոոպերացումը, ամենից առաջ գյուղատնտեսական և վարկային կոոպերացիայի գծով, գյուղացիական տնտեսությունը սոցիալիստական շինարարության ընդհանուր սիստեմում ներգրավելու համար:

Անհրաժեշտ է տրակտորներ մուծել գյուղը, վորպես միջոց գյուղատնտեսության տեխնիկական հեղափոխականացման և վորպես գյուղում կուլտուրական ոջախներ ստեղծելու ուղի:

Վերջապես, անհրաժեշտ է ելեկտրոֆիկացիայի պլանի կիրառումը, վորպես գյուղի և քաղաքի մերձեցման և նրանց միջև հակադրության վոչնչացման միջոց:

Այսպես է այն ուղին, վորով պետք է ընթանա կուսակցությունը, յեթե նա ցանկանում է ապահովել գյուղի և քաղաքի կապը տնտեսական գծով:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Դ. Ի. Կ. Բ. Ե. Բ.“, Եջ 207-208, „Հարցեր յեվ պատասխաններ“, 1926 թվի հունիսի 9-ի հառք. հայերեն Եջ 209:

«Յեկըը [հացի ճակատի դժվարություններից], յերկրորդ, այն է, վորպեսզի մանր և միջակ գյուղացիական առանձնացված տրնտեսություններն աստիճանաբար միավորվեն՝ կազմելով խոշոր կոլեկտիվներ և ընկերություններ, վորպես միանգամայն կամավոր միավորումներ, վորոնք գործում են նոր տեխնիկայի, տրակ-

տորների և այլ գյուղատնտեսական մեքենաների բազայի հիմա վրա: Իհնչումն է կոլտնտեսությունների առավելությունը: Նրանում, վոր նրանք հնարավորություն ունեն ոգտագործելու գիտություն և տեխնիկայի բոլոր տվյալները, վոր նրանք ավելի ռենտաբել են և կայուն, ավելի ապրանքային են և արտադրողական»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Դ. Ի. Կ. Բ. Ե. Բ.“, Եջ 472. „Համ. Կլբի Կենտրոնի հուլիսյան պլենումի արդյունքների մասին“, 1923 թ. հուլիսի 13-ի զեկուցումը. հայերեն Եջ 484:

«Խնդիրը պարզ է. նա, ով մտածում է կապն ապահովել միայն տեքստիլի գծով՝ մոռանում է մետաղի և մեքենաների մասին, վորոնք վերափոխում են գյուղացիական տնտեսությունը կոլեկտիվ աշխատանքի բազայի հիման վրա,—նա հավերժացնում է դասակարգերը, նա պրոլետարական հեղափոխական չէ, այլ գյուղացիական փրկսոփա»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Դ. Ի. Կ. Բ. Ե. Բ.“ Եջ. 476. „Համ. Կլբի Կենտրոնի հուլիսյան պլենումի արդյունքների մասին“, 1923 թ. հուլիսի 13-ի զեկուցումը. հայերեն Եջ 488:

«Կարելի՞ չէ առաջ տանել ինդուստրիան, թողնելով գյուղատնտեսությունը բոլորովին հետամնաց տեխնիկայի պայմաններում, առանց ապահովելու ինդուստրիայի համար գյուղատնտեսական բազա, առանց վերակառուցելու գյուղատնտեսությունը և առանց ինդուստրիային մոտեցնելու այն: Վոչ, չի կարելի: Այստեղից խնդիր է ծագում՝ առավելագույն չափով ապահովել գյուղատնտեսությունն արտադրական միջոցներով և գործիքներով, վորոնք անհրաժեշտ են տեխնիկական նոր բազայի հիման վրա արագացնելու և առաջ շարժելու նրա վերակառուցման գործը»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Դ. Ի. Կ. Բ. Ե. Բ.“, Եջ 502. „Յերի ինդուստրացման յեվ աշխատանքի մասին Համ. Կլբի մեջ“, 1923 թ. նոյեմբերի 19-ի հառք. հայերեն Եջ 514:

«Չի կարելի անվերջ, այսինքն չափազանց յերկար ժամանակի ընթացքում խորհրդային իշխանությունը և սոցիալիստական շինարարությունը հենել յերկու տարբեր հիմքերի վրա՝ ամենախոշոր և միավորված սոցիալիստական արդյունաբերության հիմքի և ամենից ավելի ցրված և հետամնաց մանր ապրանքային

գյուղացիական տնտեսութեան հիմքի վրա: Պետք է աստիճանաբար, բայց սխտեմատիկաբար և համառորեն փոխադրել գյուղատնտեսութեանը տեխնիկական նոր բաղադրի վրա, խոշոր արտադրութեան բաղադրի վրա՝ սոցիալիստական արդյունաբերութեանը մոտեցնելով այն: Կամ կլուծենք այս խնդիրը, և այն ժամանակ ապահովված է վերջնական հաղթանակը, կամ կհեռանանք այս խնդրից և չենք լուծի այն—և այն ժամանակ վերադարձը դեպի կապիտալիզմն անխուսափելի յերևույթ կարող է դառնալ»:

„Լ Ե Գ Ի Գ Ի Գ Ի Կ Ե Գ Ե Բ Ե“, Էջ 503. „Յերկի ինդուստրացման յեղ աջ քեմման մասին Համ.Վ(Բ)՝ մեջ“, 1928 թ. Յոյեմբերի 19-ի նառք. հայերեն Էջ 514-515:

«Յես կուզենայի ձեր ուղադրութեանը հրավիրել կոնկրետ տրամաբանութեանը և մանավանդ խորհրդատնտեսութեանների վրա, վորպես լծակների, վոր հեշտացնում են գյուղատնտեսութեան վերակառուցման գործը նոր տեխնիկայի բաղադրի հիման վրա և վորոնք հեղափոխութեան են առաջ բերում գյուղացիութեան գլուխներում՝ ոգնելով նրան ազատագրվելու անշարժութեանից և հին քարացած ձևերից: Մեր հացաբեր շրջաններում արակտորների, խոշոր գյուղատնտեսական մեքենաների և տրակտորային կալոնների յերևալն անհետևանք չի կարող անցնել շրջակայքի գյուղացիութեան համար: Մերմացվով, մեքենաներով և տրակտորներով շրջակայքի գյուղացիութեանը հասցված ոգնութեանը, անկասկած, կգնահատվի գյուղացիութեան կողմից և հաշվի կառնելի վորպես բանվորական պետութեան ուժի և հզորութեան նշան, այն պետութեան, վորն աշխատում է դուրս բերել նրան գյուղատնտեսութեան լուրջ վերելքի լայն ճանապարհը»:

„Լ Ե Գ Ի Գ Ի Գ Ի Կ Ե Գ Ե Բ Ե“, Էջ 514. „Յերկի ինդուստրացման յեղ աջ քեմման մասին Համ.Վ(Բ)՝ մեջ“, 1928 թ. Յոյեմբերի 19-ի նառք. հայերեն Էջ 527-528:

«Ի՞նչ բան են գոգման նոր ձևերը, ի՞նչ է նշանակում դա մեր տնտեսական քաղաքականութեան տեսակետից:

Դա նշանակում է ամենից առաջ, վոր բացի քաղաքի և գյուղի կապի հին ձևերից, յերբ արդյունաբերութեանը բավարարում եր գլխավորապես գյուղացու անձնական պահանջները (չիթ, կոշկեղեն, ընդհանրապես մանուֆակտուրա և այլն), մեզ անհրաժեշտ

են նաև կապի նոր ձևեր, յեբբ արդյունաբերութեանը կբավարարի գյուղացիական տնտեսութեան արտադրական պահանջները (գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, բարելավված սերմացու, պարարտանյութեր և այլն): Յեթե առաջներում մենք գլխավորապես բավարարում էյինք գյուղացու անձնական պահանջները, նվազ չափով շոշափելով նրա տնտեսութեան արտադրական պահանջները, ապա այժմ, շարունակելով բավարարել գյուղացու անձնական պահանջները, մեզ անհրաժեշտ է ամբողջ թափով ուժ տալ գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, պարարտանյութեր և այլն հայթայթելուն, վորոնք անմիջական կապ ունեն գյուղատնտեսական արտադրութեանը տեխնիկական նոր հիմունքներով վերակառուցելու հետ: Քանի դեռ խնդիրը վերաբերում եր գյուղատնտեսութեան վերականգնման և գյուղացիների կողմից նախկին կալվածատիրական և կուլակային հողերին տիրելուն, մենք կարող էյինք բավարարվել կապի հին ձևերով: Սակայն այժմ, յերբ խնդիրը վերաբերում է գյուղատնտեսութեան ու կոնստրուկցիային, դա արդեն բավական չէ: Այժմ հարկավոր է ավելի առաջ գնալ, ոգնելով գյուղացուն վերակառուցելու իր արտադրութեանը՝ նոր տեխնիկայի և կոնկրետ աշխատանքի հիմունքներով: Դա նշանակում է, յերկրորդ, վոր մեր արդյունաբերութեան վերապառազինման զուգընթաց՝ մենք պետք է սկսենք լրջորեն վերապառազինել և գյուղատնտեսութեանը: Մենք վերապառազինում ենք և մասամբ արդեն վերապառազինել ենք մեր արդյունաբերութեանը, տեխնիկական նոր բազա դնելով նրա հիմքում, մատակարարելով նրան կատարելագործված նոր մեքենաներ, նոր կատարելագործված կադրեր: Մենք կառուցում ենք նոր գործարաններ և ֆաբրիկաներ, մենք վերակառուցում և ընդարձակում ենք հները, մենք զարգացնում ենք մետաղագործութեանը, քիմիան, մեքենաշինութեանը: Այս հիման վրա աճում են քաղաքները, բազմանում են արդյունաբերական նոր վայրերը, ծավալվում, ընդարձակվում են հները: Այդ բաղադրի հիման վրա աճում է պարենավորման միջոցների և հումքի պահանջն արդյունաբերութեան համար: Իսկ գյուղատնտեսութեանը մնում է ելի իր հին գործիքներով, հողի մշակման ելի նույն հին, պապենական մեթոդներով, հին, պրիմիտիվ և այժմ արդեն անպետք կամ համարյա թե անպետք տեխնիկայով, տնտեսավարման և աշխատանք

քի հին մանր-գյուղացիական անհատական ձևերով: Ի՞նչ արժե հենց, որինակ, այն փաստը, վոր մինչև հեղափոխությունը մեզ նույն կար մոտ 16 միլիոն ծուխ, իսկ այժմ դրանց թիվը 25 միլիոնից պակաս չէ: Ի՞նչ ե վկայում այս ամենը, յեթե վոչ այն, վոր գյուղացիությունը գնալով ավելի ու ավելի փոշիացած, ցիւրուցան բնույթ է ստանում: Իսկ փոշիացած մանր տնտեսությունները բնորոշ առանձնահատկությունն այն է, վոր նրանք անդոր են պատշաճ չափով ոգտագործել տեխնիկան, մեքենաները, տրակտորները, ագրոգիտության տվյալները, վոր նրանք սակավապրանք տնտեսություններ են հանդիսանում: Այստեղից բխում է գյուղատնտեսական արտադրանքի ապրանքային մասի պակասությունը: Այստեղից էլ բխում է քաղաքի և գյուղի միջև, արդյունաբերության և գյուղատնտեսության միջև խզում առաջանալու վտանգը: Այստեղից էլ բխում է գյուղատնտեսությունը թափ տալու, մեր ինդուստրիայի զարգացման տեմպին հարմարեցնելու անհրաժեշտությունը: Յե՛վ ահա, վորպեսզի այդ խզման վտանգը չլինի, անհրաժեշտ է սկսել գյուղատնտեսությունը լրջորեն վերասպառազինելու աշխատանքը՝ նոր տեխնիկայի հիմունքներով: Իսկ այդպիսին վերասպառազինելու համար պետք է աստիճանաբար միավորել գյուղացիական կոտորակված տնտեսությունները՝ կազմելով կոլեկտիվներ, պետք է կառուցել գյուղատնտեսությունը կոլեկտիվ աշխատանքի հիմունքներով, պետք է խոշորացնել կոլեկտիվները, զարգացնել հին և նոր խորհրտնտեսությունները, պետք է սխտեմատիկորեն կիրառել կոնտրակտացիայի մասսայական ձևերը գյուղատնտեսության բոլոր հիմնական ճյուղերում, պետք է զարկ տալ մեքենա-տրակտորային կայանների սխտեմին, վորոնք աշակցում են գյուղացուն՝ յուրացնելու նոր տեխնիկան և կոլեկտիվացնելու իրենց աշխատանքը: Մի խոսքով՝ պետք է գյուղացիական մանր տնտեսություններն աստիճանաբար փոխանցել խոշոր կոլեկտիվ արտադրության հիմքերի վրա, վորովհետև միմյանց հասարակական տիպի խոշոր արտադրությունն է, վոր ընդունակ է լիովին ոգտագործելու գիտության և նոր տեխնիկայի բոլոր տվյալները և յոթնամղոն քայլերով առաջ տանելու մեր գյուղատնտեսության զարգացումը:

Այս չի նշանակում, իհարկե, թե մենք աչքաթող պիտի անենք

անհատական չքափորա-միջակային գյուղացիական տնտեսությունը»:

„1. Ե Ե Ի Ե Ի Գ Դ Ի Ե Խ Բ Ե Բ Ե“, Եջ 563-565. „Աջ բեմամբ մասին Համ. Կ(Բ) Ե մեջ“, 1929 թ. ապրիլի 6-առը, հայերեն Եջ 581-583:

«Վերջապես՝ կռնակցության յերրորդ նվաճման մասին անցած տարում, վորն որդանապես կապված է նախորդ յերկու նվաճումների հետ: Սոսքը վերաբերում է

մեր յերկրագործության զարգացման մեջ կատարված արմատական բեկման—

մանր, հետամնաց անհատական տնտեսությունից

խոշոր, առաջավոր կոլեկտիվ յերկրագործության,

դեպի հողի ընդհանրական մշակման,

դեպի մեքենա-տրակտորային կայանների,

դեպի նոր տեխնիկայի վրա հենվող արտեղների և կոլտնտեսությունների,

վերջապես դեպի գիզանտ խորհրտնտեսությունների՝ զինված հարյուրավոր տրակտորներով և կոմբայներով:

„1. Ե Ե Ի Ե Ի Գ Դ Ի Ե Խ Բ Ե Բ Ե“, Եջ 603. „Մեծ բեմամբ տարին: Հոկտեմբերի 12-րդ տարեդարձի առթիվ“, հայերեն Եջ 621:

«Յերկրորդ՝ գյուղատնտեսության շինարարության [կոլտնտեսության] գործում չտեսնված այդ հաջողությունը բացատրվում է նրանով, վոր խորհրդային իշխանությունը ճշտորեն հաշվի առավ գյուղացիության աճող պահանջը նոր ինվենտարի և նոր տեխնիկայի վերաբերմամբ, նա ճշտորեն հաշվի առավ գյուղացիության անեղանելի դրությունը հողի մշակման հին ձևերի պայմաններում և հաշվի առնելով այդ բոլորը,

նա ժամանակին կազմակերպեց նրան ոգնելու գործը՝

վարձակալանների, տրակտորային կալոնների, մեքենա-տրակտորային կայանների ձևով,

ապա հողի համայնական մշակումը կազմակերպելու ձևով,

կոլտնտեսությունների հաստատման ձևով,

վերջապես, խորհրտնտեսությունների ուժերով գյուղացիական տնտեսությանը բազմակողմանի ոգնություն ցույց տալու ձևով:

Մարդկության պատմության մեջ առաջին անգամ աշխարհիս

յերեսին հանդես յեկավ մի իշխանութիւն, խորհրդային իշխանութիւնը, վորն իրականում ապացուցեց իր պատրաստակամութիւնն ու իր ունակութիւնը՝ սխտեմատիկ, յերկարատեւ արտադրական ոգնութիւն ցույց տալու գյուղացիական աշխատավորական մասսաներին: Միթե պարզ չե, վոր իրեն ինվենտարի հոգսով տառապող գյուղացիութեան աշխատավորական մասսաները չեյին կարող չկառչել այդ ոգնութեանը՝ կանգնելով կոլտնտեսական ճանապարհի վրա»:

„Լ Ե Գ Ի Գ Ի Գ Գ Ի Կ Ե Գ Ե Բ Ե Բ“, Էջ 605, „Մեծ բեկման տարին: Հոկտեմբերի 12-րդ տարեդարձի առիթով“, հայերեն Էջ 623-624:

«Այժմ կույրերն անգամ տեսնում են, վոր յեթե գյուղացիութեան հիմնական մասսաներում վորեւէ լուրջ դժգոհութիւն կա, ապա դա վերաբերում է վոչ թե խորհրդային իշխանութեան կոլտնտեսական քաղաքականութեանը, այլ նրան, վոր խորհրդային իշխանութիւնը չի կարողանում հասնել կոլտնտեսական շարժման հետեից՝ գյուղացիներին մեքենաներ և տրակտորներ հայթայթելու գործում»:

„Լ Ե Գ Ի Գ Ի Գ Գ Ի Կ Ե Գ Ե Բ Ե Բ“, „Մեծ բեկման տարին: Հոկտեմբերի 12-րդ տարեդարձի առիթով“, հայերեն Էջ 626:

«Կա կապիտալիստական ճանապարհ, վոր կայանում է գյուղատնտեսութեան խոշորացման մեջ՝ կապիտալիզմի արմատացման միջոցով, վորպիսին տանում է դեպի գյուղացիութեան ազդեցատեղումը և կապիտալիստական ձեռնարկութիւնների զարգացումը գյուղատնտեսութեան ասպարեզում: Այս ճանապարհը ժըխտվում է մեր կողմից, վորպէս խորհրդային տնտեսութեան հետ անհամատեղելի մէ ճանապարհ: Կա և մի ուրիշ ճանապարհ՝ սոցիալիստական ճանապարհ, վոր կայանում է գյուղատնտեսութեան մեջ կոլտնտեսութիւններ և խորհրդատեսութիւններ ստեղծելով, վորն առաջնորդում է դեպի մանր-գյուղացիական տնտեսութիւնների միավորումը խոշոր կոլեկտիվ տնտեսութիւններում, վորոնք զինված կլինեն գիտութեամբ և տեխնիկայով, և վորն ուղղված է դեպի յերկրագործութեան կապիտալիստական տարրերի վոչնչացումը»:

„Լ Ե Գ Ի Գ Ի Գ Գ Ի Կ Ե Գ Ե Բ Ե Բ“, Էջ 616-617, „ԽՍՀՄ ագրարային ֆաղափառութեան հարցերի շուրջ“, 1929 թ. դեկտեմբեր 27-ի հառք. հայերեն Էջ 635:

«Մամուլի մեջ իմ վերջին յերկու թիւերից մեկում («Մեծ բեկման տարին») յես զարգացրի յերկրագործական խոշոր տնտեսութեան առավելութիւնների հայտնի արգումենտները մանր տնտեսութեան հանդեպ, նկատի ունենալով խոշոր խորհրդային տնտեսութիւնները: Կարիք չկա ապացուցելու, վոր բոլոր այդ արգումենտները լիովին և ամբողջովին վերաբերում են նաև կոլեկտիվ տնտեսութիւններին՝ վորպէս տնտեսական խոշոր միավորներ: Յես խոսում եմ վոչ միայն զարգացած և մեքենա-տրակտորային բազա ունեցող կոլտնտեսութիւնների, այլ և նախնական կոլտնտեսութիւնների մասին, վորոնք գտնվում են կոլտնտեսական շարժման՝ այսպէս ասած՝ մանուֆակտուրային շրջանում և հենվում են գյուղացիական ինվենտարի վրա»:

„Լ Ե Գ Ի Գ Ի Գ Գ Ի Կ Ե Գ Ե Բ Ե Բ“, Էջ 624, „ԽՍՀՄ ագրարային ֆաղափառութեան հարցերի շուրջ“, 1929 թ. դեկտեմբերի 27-ի հառք. հայերեն Էջ 641-642:

«Կարիք չկա ասելու, վոր կոլտնտեսութիւնների առավելութիւնն անհատական գյուղացիական տնտեսութիւնների հանդեպ ավելի անվիճելի կդառնա, յերբ համատարած կոլեկտիվացման շրջաններում նախնական կոլտնտեսութիւններին ոգնութեան կհասնեն մեր մեքենա-տրակտորային կայանները և կալանները, յերբ իրենք՝ կոլտնտեսութիւնները հնարավորութիւն կստանան իրենց ձեռքին կենտրոնացնելու տրակտորներն ու կոմբայները»:

„Լ Ե Գ Ի Գ Ի Գ Գ Ի Կ Ե Գ Ե Բ Ե Բ“, Էջ 625, „ԽՍՀՄ ագրարային ֆաղափառութեան հարցերի շուրջ“, 1929 թ. դեկտեմբերի 27-ի հառք. հայերեն Էջ 643:

«Վնչ, կարիք կա դեռևս շատ աշխատանք թափելու, վորպէսզի վերամշակենք կոլտնտեսական գյուղացուն, շտկենք նրա ինդիվիդուալիստական հոգեբանութիւնը և պատրաստենք նրանից սոցիալիստական հասարակութեան իսկական աշխատակուր: Իսկ դա կկատարվի այնքան արագ, վորքան արագ մեքենայացվեն, վորքան արագ տրակտորացվեն մեր կոլտնտեսութիւնները»:

„Լ Ե Գ Ի Գ Ի Գ Գ Ի Կ Ե Գ Ե Բ Ե Բ“, Էջ 633, „ԽՍՀՄ ագրարային ֆաղափառութեան հարցերի շուրջ“, 1929 թ. դեկտեմբերի 27-ի հառք. հայերեն Էջ 651:

Ո՞վ կարող է բացասել, վոր կոլտնտեսութիւնները սոցիալիստ

տական տնտեսութեան այն ձևն են, վորի միջոցով միայն բազմամիլիոն մանր գյուղացիութիւնը կարող է հաղորդակից լինել մեքենաներին և տրակտորներին՝ վորպես տնտեսական վերելքի լծակներ, վորպես գյուղատնտեսութեան սոցիալիստական զարգացման լծակները»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Ի. Գ. Ի. Կ. Ե. Գ. Ե. Բ.“, Էջ 633, „ԽՍՀՄ ագրարային բաղադրական հարցերի շարք“, 1929 թ. դեկտեմբերի 27-ի հառք. հայերեն Էջ 651:

«Պէտք է գալիս, վոր հացահատիկային պրոբլեմի լուծումը գյուղատնտեսութեան մյուս պրոբլեմների շարքում հերթականութեամբ առաջին խնդիրն է հանդիսանում»:

Սակայն լուծել հացահատիկային պրոբլեմը և դրանով իսկ դուրս բերել գյուղատնտեսութիւնը լուրջ վերելքի ուղին—նշանակում է հիմնովին վերջ տալ գյուղատնտեսութեան հետամնացութեանը,

դինել նրան տրակտորներով և գյուղատնտեսական մեքենաներով,

մատակարարել նրան գիտական աշխատավորների նոր կադրեր,

բարձրացնել աշխատանքի արտադրողականութիւնը,

ավելացնել ապրանքայնութիւնը:

Առանց այդ պայմանների ավելորդ է յերազել անգամ հացահատիկային պրոբլեմի լուծման մասին:

Հնարավոր է արդոք իրականացնել այդ բոլոր պայմանները գյուղացիական մանր անհատական տնտեսութեան բազայի վրա: Վէ՛հ, հնարավոր չէ: Հնարավոր չէ, վորովհետեւ գյուղացիական մանր տնտեսութիւնն

իվիճակի չէ ընդունելու և յուրացնելու նոր տեխնիկան,

իվիճակի չէ բավականաչափ բարձրացնելու աշխատանքի արտադրողականութիւնը,

իվիճակի չէ բավականաչափ ավելացնելու գյուղատնտեսութեան ապրանքայնութիւնը:

Մնում է միայն մի ուղի՝

գյուղատնտեսութեան խոշորացման ուղին,

ժամանակակից տեխնիկայով դինված խոշոր տնտեսութիւնների արմատացման ուղին:

Սակայն խորհրդային յերկիրը չի կարող բռնել կապիտալիստական խոշոր տնտեսութեանն երբ կազմակերպման ուղին: Նա կարող է և պետք է ընթանալ միմիայն նոր տեխնիկայով դինված սոցիալիստական տիպի խոշոր տնտեսութիւններ կազմակերպման ուղիով: Այդպիսի տնտեսութիւններ են մեզնում խորհրդային և կոլեկտիվ տնտեսութեանն երբ:

Այստեղից բխում է խորհրդատնտեսութիւնների հաստատելու և գյուղացիական մանր տնտեսութիւնները խոշոր կոլեկտիվ տնտեսութիւններում միավորելու խնդիրը, վորպես ընդհանրապես գյուղատնտեսութեան պրոբլեմի և մանավանդ հացահատիկային պրոբլեմի լուծման միակ ուղին»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Ի. Գ. Ի. Կ. Ե. Գ. Ե. Բ.“, Էջ 715-716. „Կենսաբանական կոմիտեի բաղադրական հարցերի շարք“, 2-րդ համագումարին, 1930 թ. հունիսի 27-հուլիսի 2. հայերեն Էջ 732-733:

«Գյուղացիութեան շրջադարձը դեպի կոլեկտիվացում միանգամից չսկսվեց: Այդ շրջադարձը չէր ել կարող միանգամից սկսվել ձիշտ է, կոլեկտիվացման լոգունգը կուսակցութիւնը հռչակեց դեռ ՄՄ համագումարում: Սակայն գյուղացիութեան մասսայական շրջադարձի համար դեպի սոցիալիզմ դեռ բավական չէր լոգունգ հռչակելը:

Շրջադարձի համար պահանջվում է առնվազն մի հանգամանք ևս, այն է, վոր գյուղացիական մասսաներն իրենք համոզվեն, թե հռչակված լոգունգը ձիշտ է, ընդունեն այդ լոգունգը՝ վորպես իրենց սեփական լոգունգ: Այդ պատճառով այդ շրջադարձը պատրաստվում էր աստիճանաբար:

Նա պատրաստվում էր մեր զարգացման ամբողջ ընթացքով, մեր ինդուստրիայի զարգացման ամբողջ ընթացքով և նախ և առաջ գյուղատնտեսութեանը մեքենաներ, տրակտորներ մատակարարող ինդուստրիայի զարգացման ամբողջ ընթացքով:

Նա պատրաստվում էր կուլակութեան դեմ վճռական պայքար մղելու քաղաքականութեամբ և մեր հացամթերութեան 1928—1929 թ.թ. նոր ձևերի ընթացքով, վորոնք կուլակային տնտեսութիւնը յենթարկում են չքավոր ու միջակ մասսաների վերահսկողութեանը:

Նա պատրաստվում էր գյուղատնտեսական կոոպերացիայի զար-

գացմամբ, վորն անհատ գյուղացուն սովորեցնում եր կոլտնտես-
աւարությունը:

Նա պատրաստվում եր կոլտնտեսությունների ցանցով, վորտեղ
գյուղացին ստուգում եր տնտեսությունը կոլեկտիվ յեղանակով
վարելու առավելությունները՝ անհատական տնտեսության հան-
դեպ:

Իվերջո նա պատրաստվում եր ամբողջ խորհրդային միության
մեջ ցրված և նոր տեխնիկայով սպառազինված խորհրդային
տնտեսությունների ցանցով, վորտեղ գյուղացին հնարավորու-
թյուն եր ստանում համոզվելու նոր տեխնիկայի ուժի և առա-
վելությունների մասին:

Սխալ կլիներ մեր խորհրտնտեսությունները համարել լոկ հացի
ռեսուրսների աղբյուրներ: Իրոք խորհրտնտեսություններն իրենց
նոր տեխնիկայով, շրջակա գյուղացիներին իրենց ցույց տված
ոգնությամբ, տնտեսական աննախընթաց թափով հանդիսացան
առաջատար աշխուժ, վորը հեշտացրեց գյուղացիական մասսա-
ների շրջադարձը, մղեց նրանց դեպի կոլեկտիվացման ուղին:

Ահա թե ինչ հիմքի վրա ծագեց միլիոնավոր չքավորների ու մի-
ջակների մասսայական աշխուժացման կոլտնտեսական շարժումը, վորն
սկսվեց 1929 թ. յերկրորդ կեսից, վորն սկիզբ դրեց մեր յերկրի
կյանքի մեծ բեկման շրջանին:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Գ. Բ. Գ. Բ.“, էջ 717-718, „Կենտրոնական կոմիտեի Բա-
ղամական հասցեագրությունը Համ. Կլբի 16-րդ համագումարին“, 1930 թ.
հունիսի 27-հուլիսի 2-ը. հայերեն էջ 734-735:

«Չի կարելի ասել, թե մենք «ընդհուպ մոտեցել ենք» գյուղատնտե-
սության ելեկտրոֆիկացիային: Յեթե մենք իրոք ընդհուպ մոտե-
ցած լինեյինք գյուղատնտեսության ելեկտրոֆիկացիային, ապա
այժմ մենք արդեն կունենայինք 10—15 շրջան՝ ելեկտրոֆիկա-
ցած գյուղատնտեսական արտադրությամբ: Բայց դուք լավ գի-
տեք, վոր առայժմ այդպիսի բան չկա մեղնում: Ինչ վոր կա-
րելի յե ասել այժմ գյուղատնտեսության ելեկտրոֆիկացիայի
մասին, դա աշխատեց և, վոր ելեկտրոֆիկացիան մեզ մոտ փորձնական
մշակման շրջանումն է գտնվում: Լենինն այդպես ել նայում եր
այդ գործի վրա՝ խրախուսելով գյուղատնտեսության ելեկտրո-
ֆիկացիայի փորձերը: Միքանի ընկերներ կարծում են, թե
տրակտորների դարն արդեն անցել է, թե արդեն ժամանակն է

տրակտորներից գյուղատնտեսության ելեկտրոֆիկացիային անց-
նելու: Դա, իհարկե, դատարկ բան է, ֆանտաստիկա յե: Այդպի-
սի ընկերների փեշից պետք է քաշել: Հենց այդպես ել վարվում է
Հոգեփոխումատն այդ ընկերների հետ»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Բ. Գ. Բ.“, էջ 788, „Կենտրոնական կոմիտեի Բա-
ղամական հասցեագրությունը Համ. Կլբի 16-րդ համագումարին“, 1930 թ. հու-
նիսի 27-հուլիսի 2-ը. հայերեն էջ 815:

«Հատկապես այն փաստը, վոր կապիտալիզմը ռացիոնալացնում է տեխնիկան և արտադրում է հսկայական քանակությամբ ապրանքներ, վորոնց շուկան անկարող է կլանել, հատկապես այդ փաստը տանում է դեպի պայքարի սրումն իմպերիալիստների բանակում՝ վաճառահանման շուկաների համար, կապիտալ արտահանելու շուկաների համար, տանում է դեպի նոր պատերազմի համար, աշխարհի նոր վերաբաժանման համար պայմաններ ստեղծելուն»:

„Ույնգիտի մասին“, էջ 673. „Միջազգային դոկտրինը յեվ ԽՍՀՄ պաշտպանությունը“, 1927 թ. ոգոսոսի 1-ի հառը:

«Յեղավ ձեռք աշխատ, ինչպես ասում էյին բայրեկները 2—3 տարի սրանից առաջ:

Բայրեկներն ասում էյին, վոր տեխնիկայի աճումը կապիտալիստական յերկրներում, արտադրողական ուժերի և կապիտալիստական ռացիոնալիզացիայի աճումը՝ բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաների կենսական սահմանափակ մակարդակի պայմաններում՝ անխուսափելիորեն պետք է հանգեցնեն տնտեսական ծանր ճգնաժամի: Բուրժուական մամուլը ծիծաղում էր բայրեկների «որիզինալ մարգարեությունների» վրա: Այդ ուղիւնիստները սահմանադատվում էյին բայրեկյան այդ պրոգնոզից, մարքսիստական վերլուծությունը փոխարինելով լիբերալ դատարկաբանությամբ «կազմակերպված կապիտալիզմի» մասին: Իսկ ի՞նչ դուրս յեկավ իրականում. դուրս յեկավ այն, ինչ ասում էյին բայրեկները»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Ի. Կ. Ե. Բ. Բ.“, „Կենտրոնական կոմիտեի բաղաձայն հազվեցվությունը Համ. Կ(Բ) 16-րդ համագումարին“, 1930 թ. հուլիսի 27-ի հուլիսի 2-ը. հայերեն էջ 696:

¹⁾ Այս թեմային վերաբերող նյութը մասամբ, կոնտեքստի կապակցությամբ, մտել է 3 բաժինը:

«Ճգնաժամի հիմքը արտադրության հասարակական բնույթի և արտադրության արդյունքի յուրացման կապիտալիստական յեղանակի միջև յեղած հակասության մեջն է: Կապիտալիզմի այս հիմնական հակասության արտահայտությունը հանդիսանում է այն հակասությունը, վորը գոյություն ունի մի կողմից կապիտալիզմի արտադրական հնարավորությունների հսկայական աճման, վորը նպատակ ունի մաքսիմում կապիտալիստական շահ ստանալ, և մյուս կողմից աշխատավորների միլիոնավոր մասսաների վճարունակ պահանջի համեմատական կրճատման միջև, վորոնց կենսական մակարդակը կապիտալիստներն ամբողջ ժամանակ աշխատում են պահպանել ծայրահեղ մի նիւթով սահմաններում: Մրցութունը տանելու և ավելի շատ շահույթ ստանալու համար կապիտալիստներն ստիպված են դարգացնել տեխնիկան, ռացիոնալիզացիա կատարել, ուժեղացնել բանվորների շահագործումը, ծայր աստիճան բարձրացնել իրենց ձեռնարկությունների արտադրական հնարավորությունները: Իրարից հետ չմնալու համար բոլոր կապիտալիստներն ստիպված են այս կամ այն կերպ բռնել արտադրական հնարավորությունների կատարող զարգացման այս ճանապարհը»:

„Լ. Ե. Գ. Ի. Գ. Ի. Կ. Ե. Բ. Բ.“, էջ 689, „Կենտրոնական կոմիտեի բաղաձայն հազվեցվությունը Համ. Կ(Բ) 16-րդ համագումարին“, 1930 թ. հուլիսի 27-ի հուլիսի 2-ը. հայերեն էջ 702—703:



ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԻ
ՈՐԿԱԳՈՐԾՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոկտեմբերի ճանապարհին.— հոդվածներ և ճառեր, 1917 թ. մարտ — հոկտեմբեր. М.—Л. Госиздат 1926, էջ 56 և 280:
Նամակ Լենինին.— „Правда“, 1930, № 351(4796), գեղատեմբերի 22-ին (Գոելրոյի պլանի մասին):
Ռ. Կ. Կ. (Բայլշեիկներ) XIII համագումարի արդյունքների մասին.— Ձեկուցում Ռ. Կ. Կ. (Բ) Կ. Կ. Գալ-կոմների քարտուղարների կուրսերում — 1924 թ. հունիսի 17-ին.— Харьков, Кооперативное издательство „Пролетарий“ 1924, էջ 24:
Խորհրդային միության տնտեսական դրության մասին.— Ձեկուցում Լենինգրադի կադմակերպության ակտիվին ՀամԿ(Բ) Կենտկոմի պլենումի աշխատանքների մասին — 1926 թ. ապրիլի 13-ին, М.—Л. Госиздат, 1926, էջ 32(1):
Ոպդիցիայի մասին.— Հոդվածներ և ճառեր 1921 — 27 թ.թ. М.—Л. Госиздат, 1928, էջ 750:
Աջ ֆրակցիոներների մասին ամերիկյան կոմկոմ.— М.—Л. Госиздат, 1930, էջ 46 (2):
Լենինի դմի հարցերը.— Յոթերորդ լրացված տպագրություն, М.—Л. Гос. социально экономическое изд-во, 1931, էջ 803:
Տնտեսավարների խնդրների մասին.— Ճառ սոցիալիստական արդյունաբերության աշխատողների առաջին համամիութենական կոնֆերենցիայում. (М.), Огиз, „Московский рабочий“, 1931, էջ 15:
Նոր պայմաններ — տնտեսական շինարարության նոր խնդրներ.— (М.), Огиз, „Московский рабочий“, 1931, էջ 16:
Բայլշեիկի պատմության մի քանի հարցերի մասին. նամակ «Պրոլետարսկայա ռեվոլյուցիա» ժուրնալի խմբագրությանը.— «Большевик», 1931, № 19—20, էջ 10—18:
Ցիտատները վերաբերում են միայն վերոհիշյալ աշխատություններին, ըստ վորում հավաքածուների վերնագրերը ցիտատներում տրված են հրճառ:

«Ազգային գրադարան»



NL0179055

ԳԻՆԸ 70 ԿՈՂ.



И. В. СТАЛИН
О ТЕХНИКЕ

Партиздат 1933 Эривань